

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱԾ**

Ա.Ս. ԱՎԱՆԵՍՅԱՆ Հ.Ի.ՄՈՎՄԻՍՅԱՆ

**ՄԵԹՈԴԱԿԱՆ  
ՅՈՒՅՈՒՄՆԵՐ**

«ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ  
ԵՐԿՐՈՒԲԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԵՎ ԵՐԿՐՈՒԲԱՆԱԿԱՆ  
ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ»  
ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՈՒՐՍԱՅԻՆ  
ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ

## **ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՄԱՐԱՆ**

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՎԱՆԵՍՅԱՆ Ա.Ս., ՄՈՎՍԻՍՅԱՆ Հ.Ի.

**«ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ»  
ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ**

**ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
2014**

ՀՏԴ 55: 528(072)

ԳՄԴ 26.3+26.1

Ա 774

Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ աշխարհագրության և  
երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհուրդը

**Գիտ. խմբագիրներ՝** երկրաբ.-հանքար. գ.թ., դոցենտ Ռ.Ս. Մովսեսյան  
երկրաբ.-հանքար. գ.թ., դոցենտ Հ.Պ. Գույումջյան

**Գրախոս՝** տեխնիկ. գ.դ., պրոֆեսոր Վ.Պ. Վարդանյան

Ա 774 Ավանեսյան Ա.Ս., Մովսեսյան Հ.Ի.

«Կառուցվածքային երկրաբանություն և երկրաբանական քարտեզագրություն» դասընթացի կորսային աշխատանքների մեթոդական ցուցումներ. / Ա. Ավանեսյան, Հ. Մովսեսյան; -Եր.: ԵՊՀ հրատ., 2014 - 70 էջ:

Զեննարկում տրված ցուցումներն ուսանողներին կօգնեն կատարել «Կառուցվածքային երկրաբանություն և երկրաբանական քարտեզագրություն» դասընթացի կորսային աշխատանքը: Այն կարող է ուղեցույց լինել ուսումնաարտադրական պրակտիկաների հաշվետվությունների, «Երկրաբանություն» մասնագիտության կորսային և ավարտական աշխատանքների կատարման համար:

Նախատեսված է ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ուսանողների, ինչպես նաև երկրաբանության ոլորտում երկրաբանական քարտեզագրման գրադիդող ուսանողների ու մասնագետների համար:

**Հասկացություններ՝** - երկրաբանական քարտեզ, կառուցվածքային ձևեր, շերտ և շերտավորություն, աններդաշնակություն, հրային ապարներ, պայմանական ձևաներ, երկրաբանական կտրվածք, տեկտոնական քարտեզ, ապարների տեղադրման ձևեր, խզվածքային խախտումներ:

ՀՏԴ 55: 528(072)

ԳՄԴ 26.3+26.1

ISBN 978-5-8084-1857-8

© ԵՊՀ հրատարակություն, 2014

© Ավանեսյան Ա.Ս., Մովսեսյան Հ.Ի., 2014

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

«Կառուցվածքային երկրաբանություն և երկրաբանական քարտեզագրություն» դասընթացի կուրսային աշխատանքը «Երկրաբանություն» մասնագիտությամբ ուսանողների գիտելիքների ձևավորման կարևորագույն օրակներից մեկն է: Այն հանրագումարի է բերում ուսանողների կողմից «Կառուցվածքային երկրաբանություն և երկրաբանական քարտեզագրություն» առարկայի կարևորագույն մասի՝ ապարների տեղադրման ձևերի, երկրաբանական քարտեզների ու կտրվածքների վրա նրանց պատկերման եղանակների մասին գիտելիքները: Աշխատանքի հիմնական նպատակն է ամրացնել դասընթացների ընթացքում ուսանողների ձեռք բերած տեսական գիտելիքներն ու գործնական կարողությունները և զարգացնել տեղանքի երկրաբանական ու տեկտոնական կառուցվածքների վերլուծման ունակությունները: Այստեղ անհրաժեշտ է նաև հարակից առարկաների՝ «Պատմական երկրաբանություն», «Օգտակար հանածոների մասին գիտություններ», «Միներալոգիա» և այլնի իմացությունը:

Աշխատանքի կատարման ընթացքում ուսանողը պետք է կարողանա ինքնուրույն վերլուծել երկրաբանական քարտեզը և դրա հիման վրա տալ առաջադրված շրջանի երկրաբանական կառուցվածքի նկարագրությունը, կառուցել երկրաբանական կտրվածքներ, բլոկ-դիագրամ, տեկտոնական քարտեզ և վերականգնել շրջանի երկրաբանական զարգացման պատմությունը: Կուրսային աշխատանքում պետք է արտահայտված լինեն նաև շրջանում տարածված մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոներն ու նրանց հայտնաբերման հեռանկարները, արվեստ ամփոփիչ եղակացություններ, տեքստի բովանդակությունը լրացրած գծագրեր: Քարտեզի վերլուծության արդյունքները պետք է շարադրվեն տեքստի ձևով և գծագրական հավելվածներով, որոնք իրենց բովանդակությամբ նույն երկրաբանական հաշվետվություններին:

Կուրսային աշխատանքի նպատակներից է նաև ուսանողներին դաշտային աշխատանքների կատարմանը նախապատրաստելը, քանի որ երկրաբանական քարտեզն ազատ կարդալու հմտությունը դաշտում գրագետ երկրաբանահանությային աշխատանքների անցկացման երաշխիքն է:

Այսպիսով, աշխատանքի կատարումը նպաստում է երկրաբանական քարտեզագրության ոլորտում գործնական կարողությունների ձեռքբերմանը, որը հետագայում կիրառվում է արտադրական պրակտիկայի հաշվետվոքյունների, կորսային և ավարտական աշխատանքների, ինչպես նաև մագիստրոսական և թեկնածուական ատենախոսությունների կազմման ժամանակ:

Առաջարկվող մեթոդական ցուցումները ներառում է կորսային աշխատանքի նպատակների ու խնդիրների, նրա կատարման մեթոդների, անցկացման փուլերի նկարագրությունը, ինչպես նաև ցուցումներ կորսային աշխատանքի տեքստի բովանդակության ու կցվող գծագրերի վերաբերյալ:

## 1. ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴՐՆԵՐՆ ՈՒ ՍԵԹՈՂՆԵՐԸ

Լավ և գրագետ կազմված երկրաբանական քարտեզը նման է գրավիչ գորի, որն ընթերցելիս կարելի է ստանալ չափազանց կարևոր և հետաքրքիր տեղեկություններ քարտեզագրված տարածքի երկրաբանական կառուցվածքի մասին: Երկրաբանական քարտեզում պատկերված շերտագրության, ապարագրության, լիբոլոգիայի, հրայնության, տեկտոնիկայի և այլ տվյալների վերլուծության հիման վրա երկրաբանները ստանում են անհրաժեշտ տեղեկություններ հետազոտվող տարածքի տեկտոնական զարգացման և ձևավորման մասին՝ տարածքի երկրաբանական կառուցվածքը, վաղ երկրաբանական անցյալում գոյություն ունեցած հնաշխարհագրական, լանջաֆտային, կլիմայական պայմանները, կենդանական և բուսական աշխարհը, ինչպես նաև երկարատև երկրաբանական զարգացման պատճենագործության ընթացքում տեղի ունեցած տարրեր երկրաբանական երևույթները՝ ծովայինից ցամաքային ռեժիմից անցումը, ծալքագոյացումն ու լեռնաառաջացումը, հրաբուխների արտավիժումը, աղետաբեր երկրաշարժները, ցունամինները, սողանքները և այլ բնական աղետներ:

Երկրաբանական քարտեզից տվյալներ են ստանում հետազոտվող շրջանում տարածված տարաբնույթ օգտակար հանածոների, նրանց բաշխման օրինաչափությունների և նոր տեսակների ու հանրավայրերի հայտնաբերման նախադրյալների մասին: Ըստ Էորյան, միայն գրագետ տարամասշտար երկրաբանական քարտեզները, որոնք կազմված են բոլոր պահանջներին համապատասխան, կարող են վստահելի հիմք ծառայել այս կամ այս տարածքներում որոնողական ու երկրաբանահետախուզական աշխատանքների կազմակերպման, նոր օգտակար հանածոների հայտնաբերման հեռանկարների գնահատման և ի վերջո, երկրի համար վստահելի հանքահումքային հենքի ստեղծման համար: Երկրաբանական քարտեզները նաև հիմք են հանդիսանում ջրաերկրաբանական և ինժեներակրաբանական քարտեզների համար, առանց որոնց հնարավոր չեն քաղաքների, բնակավայրերի, կարևոր օբյեկտների և ձեռնարկությունների ջրամատակարարման ապահովումը, շինարարության նախագծումն ու իրականացումը, սեյսմիկ պայմանների գնահատումը:

Երկրաբանական քարտեզի վերլուծության ընթացքում ուսանողը պարտավոր է.

- ուսումնասիրել նստվածքային ու հրային ապարների հասակային հաջորդականությունը, որոշել նրանց տեղադրման ձևերը, պարզել և դասակարգել ուսումնասիրվող տարածքում գոյություն ունեցող ծալքափոր ու խզվածքային տեկտոնական խախտումները,
- պարզել աններդաշնակության մակերեսները՝ տեկտոնական և շերտագրական: Վերջինների շարքում որոշել աններդաշնակության տեսակը (զուգահեռ, աշխարհագրական, անկյունային՝ այդ թվում ազիմուտալ), վերլուծել նրանց նշանակությունը տվյալ տարածքի երկրաբանական զարգացման պատմության մեջ,
- առանձնացնել ապարների առավել բնորոշ ֆորմացիաները և վերլուծել նրանց կապը տեկտոնական կառուցվածքի ու երկրաբանական պատմության հետ,
- առանձնացնել շերտագրական ստորաբաժանումների հասակի, կազմի, հզորությունների և տարածման ուղղությամբ նրանց փոփոխման, ինչպես նաև տեկտոնիկայի վերլուծման հիման վրա որոշել շրջանի հիմնական կառուցվածքային տարրերը և տալ նրա տեկտոնական շրջանացումը,
- որոշել հրային առաջացումների կազմն ու հասակը, ինչպես նաև ուսումնասիրվող տարածքի հրային համալիրների (կոմպլեքսների) տեկտոնական պատկանելիությունը,
- ստացված տվյալների հիման վրա կազմել երկրաբանական կտրվածքներ ու տեկտոնական քարտեզ, տալ տեկտոնիկայի մանրամասն նկարագրությունը և նշագծել նրա ձևավորման գլխավոր փուլերը,
- վերլուծել շրջանի երկրաբանական զարգացման պատմությունը, կատարել հիմնական եզրակացություններ նշանակալից երկրաբանական իրադարձությունների փոխկապակցվածության օրինաշափությունների մասին:

Նշված խնդիրների լուծման համար խորհուրդ է տրվում կիրառել ստորև բերվող մեթոդները:

### **1.1. Քարտեզի վրա երկրաբանական սահմանների վերլուծում**

Երկրաբանական քարտեզի հետ աշխատանքի ընթացքում այս մեթոդը բաժանվում է երկու մասի:

**1.1.1. Ոելիեֆի նկատմամբ երկրաբանական սահմանների տարածական դիրքի վերլուծման մեթոդ:** Մրա հիմքում ընկած է երկրաբանական քարտեզի վրա շերտերի (և ընդհանրապես երկրաբանական մակերեսների) տեղադրման տարրեր ձևերի նշանների հայտնաբերումը: Որոշելով սահմանների փոխհարաբերությունը ոելիեֆի հետ՝ ուսանողը պետք է կարողանա առանձնացնել հորիզոնական, մեղմաթեք և գառիթափ տեղադրված շերտերը, վերլուծել քարտեզի վրա գտնվող շերտային եռանկյունները և, տեղադրման էլեմենտների բացակայության դեպքում, որոշել շերտերի (կամ խզվածքների) տեղադրման էլեմենտները:

Տվյալ մեթոդը կիրառվում է ինչպես երկրաբանական քարտեզի ընթերցման ամենապահ փուլում՝ նստվածքների ընդհանուր տեղադրման բնույթի պարզաբանման նպատակով, այնպես էլ մանրամասն վերլուծման փուլում՝ կոնկրետ տեղամասերում տեղադրման պայմանները ճշտելու և թվային տվյալներ ստանալու համար: Բացի այդ, սրա օգնությամբ որոշում են կոնտակտների դիրքը տարածության մեջ ու ապարների տեղադրման ձևերը:

**1.1.2. Երկրաբանական սահմանների փոխհարաբերությունների վերլուծման մեթոդ:** Ուսումնասիրելով երկրաբանական սահմանների փոխհարաբերությունները՝ անհրաժեշտ է որոշել տարրեր շերտագրական ստորաբաժանումների միջև երկրաբանական կոնտակտների բնույթը (նկ. 2-6): Ընդ որում, պետք է հիշել հետևյալը.

- գուգահեռ կոնտակտները մատնանշում են կառուցվածքի համասեռությունը և, որպես կանոն, արտահայտում են շերտերի ներդաշնակ կամ գուգահեռ աններդաշնակ տեղադրումը՝ առանց անկյունային աններդաշնակության (նկ. 6),
- բոլոր հատող սահմանները հուշում են նստվածքների միջև աններդաշնակ փոխհարաբերությունների մասին և բույլ են տալիս որոշել դրանց հասակը: Պետք է նկատի ունենալ, որ երկրաբանական սահմանների միջև առավել մեծ անկյունը սովորաբար դիտվում է անկյունային աններդաշնակության (նկ. 3) և ինտրովիվ ապարների հետ (նկ. 4-5) կոնտակտի դեպքերում: Աշխարհագրական աններդաշնակությունների ժամանակ կոնտակտի տեղադրման անկյունը համեմատաբար փոքր է: Հստ տարածման աններդաշնակությունները փոխվում են: Լիակատար բնութագրման համար, բացի տեսակից, առանձին դեպքերում նպատակահարմար է նշել

նաև նրանց աստիճանը՝ քոյլ կամ կտրուկ: Կարևոր է տարբերել նաև տարածաշրջանային (ռեգիոնալ) և տեղային (լոկալ) աններդուաշնակությունները:

Այս մեթոդը հնարավորություն է տալիս որոշելու ծալքավորության, խզվածքների և հրային մարմինների ներդրման վերին ու ստորին սահմանները՝ այսինքն, որոշել նրանց հասակը:

## 1.2. Շերտավորության հաջորդականության վերլուծում

Ապարների կազմի, շերտագրական ստորաբաժանումների միջև կոնտակտի բնույթի և, երբեմն, հնէաբանական տվյալների հիման վրա եզրակացություններ են արվում նատվածքակուտակման պայմանների մասին: Եթե կտրվածքում (ուղղաձիգ ուղղությամբ) ապարների շերտերն ունեն հաջորդական, աստիճանաբար անցում, ապա կարելի է խոսել նատվածքակուտակման անընդհատության մասին: Եթե շերտերի միջև նշվում է շերտագրական ընդմիջում կամ ֆիքսվում են լվացման, հողմնահարման հետքեր (կոնտակտի անհարթ մակերես), ապա կարելի է ենթադրել, որ այդտեղ տեղի է ունեցել նատվածքակուտակման ընդմիջում:

Շերտագրական կտրվածքում նատվածքային ապարների լիբոլոգիական կազմի հերթափոխումն արտահայտում է տեկտոնական ռեժիմի հաջորդական փոփոխությունները:

Կտրվածքով դեպի վեր ավելի խորջրային նատվածքների ի հայտ գալը (կտրվածքի տրանսգրեսիվ տիպ) մատնանշում է տարածքի ընդհանուր ճկումը, որն ուղեկցվում է ծովի տրանսգրեսիվայով: Խորջրային նատվածքների հերթափոխումը ծանծաղ ջրայիններով (կտրվածքի ռեգրեսիվ տիպ) վկայում է երկրակեղևի բարձրացման մասին: Կտրվածքում ցամաքային նատվածքների առկայությունը վկայում է այդ տարածքի բարձրացման մասին: Եվ վերջապես, նատվածքակուտակման ընդմիջումը, լվացման ու հողմնահարման հետքերը մատնանշում են տվյալ շրջանի տեկտոնական բարձրացումները:

Առանձին դեպքերում բեկորային նյութի պետրոգրաֆիական կազմի ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս որոշել ցամաքային տեղամասերը, երկրակեղևի բարձրացված շրջանները, այսինքն բերման մարզերը:

Նստվածքակուտակման պայմանների վերլուծության հիման վրա եզրակացություններ են արփում շրջանի տարածքում անցյալում գոյություն ունեցող ավազանների կոմպենսացման աստիճանի մասին:

### 1.3. Ընդմիջումների և աններդաշնակությունների վերլուծում

Ժամանակի և տարածության մեջ նստվածքակուտակման ընդմիջումների ուսումնասիրությունը թույլ է տալիս որոշել երկրակեղելի բարձրացման տեղամասերը: Ընդմիջումից անմիջապես վեր տեղադրված շերտերի հասակից որոշվում է այն ժամանակը, երբ ավարտվել է բարձրացումը և սկսվել իջեցման ընթացքը: Հստ որում, կարևոր է նշել շերտագրական հաջորդականությունը շրջանի տարբեր տեղամասերում, որը թույլ է տալիս որոշել դենուդացիայի (լեռկացման) և, առավել ճիշտ, տրանսօրեսխայի ընդհանուր ուղղությունը:

Հաճախակի աններդաշնակությունները դիտվում են սահմանափակ տարածքում: Ուրվագծելով նրանց տարածման մակերեսը, որոշում են տեկտոնական բարձրացման սահմանները:

Կարևոր նշանակություն ունի շերտագրական աններդաշնակության տեսակի պարզաբանումը՝ զուգահեռ, աշխարհագրական, անկյունային (Ակ. 3-6): Դա թույլ է տալիս եզրակացություններ անել տեկտոնական շարժումների բնույթի մասին, հայտնաբերել ընդհանուր տարածական բարձրացումներն ու խզվածքածալքավոր ձևախախտումները: Անկյունային աններդաշնակությունն ունի կարևոր նշանակություն: Այն թույլ է տալիս որոշել ծալքառաջացման վերին հասակային սահմանը, իսկ մեծությունով դատել ինտենսիվության մասին:

Շերտագրական աններդաշնակության մեծությունը և տարածման մակերեսն արտահայտում են տեկտոնական բարձրացումների ինտենսիվությունը, տեղողությունն ու կայունությունը:

Շրջանի կառուցվածքի երկրաբանական զարգացումը լիակատար վերականգնելու համար անհրաժեշտ է ընդմիջումների ուսումնասիրման տվյալները լրացնել ֆացիաների և հզորությունների վերլուծության տվյալներով:

**1.3.1. Ֆացիաների ուսումնասիրման մեթոդ:** Շրջանի տարբեր մասերում ուսումնասիրելով շերտագրական ստորաբաժանման ֆացիաները և

համեմատելով մեկը մյուսի հետ՝ միատեսակ նստվածքների լիբորգիայի փոփոխությամբ կարելի է որոշել նստվածքակուտակման պայմանների փոփոխությունները (նկ. 1): Ըստ որում, անհրաժեշտ է որոշել ժամանակի ընթացքում կայուն փոփոխությունները, որոնք արտահայտում են տեկտոնական շարժումների դրսևությունը: Օրինակ, նրահատիկ ապարների (կավեր, ավազներ) խոշորաբեկորներով հերթափոխումնը կարելի է որոշել լվացման մարզի, այսինքն բարձրացման տեղամասը:

Ժամանակի և տարածության մեջ (շերտագրական սյունակում և քարտեզի վրա) խոշորաբեկոր ֆացիաների տեղաշարժով կարելի է որոշել ափային գծի տեղաշարժի՝ ռեգրեսիայի և տրանսգրեսիայի ուղղությունը:

Անհրաժեշտ է ֆացիաների փոփոխությունները կապել տեկտոնիկայի հետ և ֆացիալ փոփոխությունները ցույց տալ կտրվածքներում:

**1.3.2. Հզորությունների ուսումնասիրման մերոդ:** Հզորությունների ուսումնասիրումը պետք է հիմնվի իրական հզորությունների վերլուծման վրա: Առանձին ստվարաշերտերի հզորությունների փոփոխությունների բնույթի մասին լիովին պատկերացում ստանալու համար առաջարկվում է քարտեզի տարբեր մասերում կազմել կտրվածքներ: Այդպես կարելի է որոշել հզորությունների կապը տեկտոնական միավորների հետ: Կոմպենսացվող ավազանների համար կարելի է համարել, որ նստվածքների հզորությունը արտահայտում է երկրակեղևի գումարային ճկումը:

Այս եզրակացությունը կիրառելի չէ ծովային ավազանների խորօրյա տեղամասերի համար, որտեղ ճկումը կարող է լինել շատ ավելի մեծ քան նստվածքների հզորությունը:

Նստվածքների ֆացիաներն ու հզորություններն ուսումնասիրելու ընթացքում պետք է հավաքել նաև անհրաժեշտ տվյալներ (լանջաֆտային և կլիմայական պայմաններ, բուսականություն և այլն) հնաշխարհագրական կառուցումների համար:

## 1.4. Ֆորմացիաների վերլուծում

Ֆորմացիաներն իրենցից ներկայացնում են ապարների կայուն և բնորոշ զուգորդություններ, որոնք բնորոշվում են առաջացման պայմանների ընդհանրությամբ՝ առաջացել են նման ֆիզիկաաշխարհագրական և տեկտոնական (երկրադինամիկական) պայմաններում: Սրանք արտահայտում են տեկտոնական ռեժիմի որոշակի փուլեր և հարում են համապատասխան խոշոր տեկտոնական միավորների, ունեն բնորոշ ապարագ-

րական կազմ: Ֆորմացիաների առաջացման վրա ազդում են տեկտոնական ռեժիմը, հրաբխականությունն ու կիման: Ֆորմացիաները հիմք են ծառայում երկրակեղեկի խոշոր կառուցվածքների առանձնացման համար՝ գեոսինկինալներ, պլատֆորմներ, եզրային ճկվածքներ, լեռնաառաջացման կառուցյներ և այլն: Տարբերում են նատվածքային, հրաբխածին, հրաբխածին նատվածքային, ինտրուզիվ - մագմայական, փոխակերպային, հանքային և այլ երկրաբանական ֆորմացիաներ:

«Երկրաբանական ֆորմացիա» հասկացությամբ պետք է հասկանալ ապարների բնական ընդհանուրություն, որն առաջացել է որոշակի իրադրությունում և բնորոշ է երկրակեղեկի զարգացման առանձին էտապներին: Ֆորմացիան բնորոշվում է ապարների կազմով, կառուցվածքով և այլ ֆորմացիաների հետ փոխհարաբերությամբ:

Ուսումնասիրելով ֆորմացիաների հաջորդականությունը՝ կարելի է նշել հետազոտվող կառուցվածքների զարգացման հիմնական փուլերն ու ներափուլերը: Ֆորմացիոն վերլուծությունն նշանակում է ֆորմացիաների առանձնացում, կառուցվածքների տիպերի որոշում և դրանց զարգացման փուլերի պարզաբանում:

Ֆորմացիոն տիպը վերացական հասկացություն է, որի մեջ ընդհանուրացված են կազմով մոտ կոնկրետ մագմայական համալիրների (կոնվլիքսների) գլխավոր առանձնահատկությունները, որոնք կարող են ունենալ տարբեր հասակ և տեղայնացված լինեն տարբեր, հաճախ իրարից հեռու, սակայն միատիպ երկրաբանական ստրոկտուրաներում (հիպերբազիտային, անորոգիտային, տրապային, գրանողիտայտային բարոլիտների): Ֆորմացիոն տիպի մեջ միավորվում են նման կոնկրետ ֆորմացիներն անկախ նրանց հասակից և տեղադիրքից:

Մագմայական ֆորմացիան ընդհանուր հասկացություն է (տերմին), որը կարող է կիրառվել և մագմայական ապարների (համալիրների) զուգորդության և ֆորմացիոն տիպերի համար: Եթե այս հասկացության բնորոշման համար ցույց է տրվում միայն ապարների կազմը (հիպերբազիտային, գրանողիտային, բազալտային, ոլորլիտային), ապա հասկացվում է ֆորմացիոն տիպը, իսկ եթե ցույց է տրվում ֆորմացիայի աշխարհագրական կամ երկրաբանական տեղադիրքը (Սվարանց վերին էոցենի տիտանոնագմետիտային, գաբրո – օլիվինիտային, Փամբակի օլիգոցենի նեֆելինային սիենիտային, Մարմարիկ ստորին կավճի տոնալիտային), ապա այսպիսի բառակապակցությամբ հասկացվում է կոնկրետ մագմայական համալիրը:

Մագմայական համալիրը տարածության և ժամանակի մեջ որոշակի հատված զբաղեցնող, սերտ պարագեննետիկ հարաբերություններով կապված, հասակով և առաջացման երկրաբանական իրադրությամբ մոտ ապարների բնական զուգորդություն է (ասոցացիա): Յուրաքանչյուր մագմայական համալիր կոնկրետ է և բնորոշվում է ապարների որոշակի ժողովածուով, միներալային կազմի և պետրոքիմիայի առանձնահատկություններով, ներքին կառուցվածքով և այլ մագմայական համալիրների ու նստվածքային ֆորմացիաների հետ փոխհարաբերությամբ:

Ֆորմացիոն տիպեր, ֆորմացիաներ և համալիրներ հասկացությունները կիրառվում են նաև նստվածքային ապարների (կարքոնատային, տերրիգեն, մոլասային և այլն), հանքանյութերի (կոլշետանային, պղինձապորֆիրային, ոսկի-բազմամետաղային, ոսկի-արծարային, կապարցինկային, վոլֆրամիտ-շենկլտային, վոլֆրամ-մոլիբդենային, բարիտ-բազմամետաղային և այլն), մետամորֆային ապարների (կանաչքերպարային, ամֆիբոլիտային, գրանուլիտային, գրաուկոֆոնային կամ կապույտքերպարային և այլն) համար: Ֆորմացիաների, ֆորմացիոն տիպերի, համալիրների անվանումները տրվում են նրանց առավել բնորոշ ապարների և հանքանյութերի տիպերով:

Այժմ ընդունված է մագմայական ապարների հետևյալ դասակարգումը (բերված է կրճատումներով):

1. Գեոսինկլինալային էտապների ֆորմացիաներ՝ սպիլիտ - դիաբազային, գաբրո - պիրոքսենիտ - դունիտային, գաբրո - պլազմոգրանիտային, հիպերբազիտային:

2. Գեօանտիկլինալային (օրոգեն) էտապների ֆորմացիաներ՝ անդեղիտային, ոխոլիտային, գաբրո - գրանուլիտիտային, գաբրո - մոնցոնիտ - սիենիտային, գրանիտային բրոդիտների:

3. Կայուն մարգերի ֆորմացիաներ.

- Ծածկոցների և սիլերի՝ տոլեիտային բազալտային (տրապային), տրախիբազալտային մայրցամաքների և օվկիանոսների, ալկալային բազալտոնիտային:
- Կենտրոնական ինտրոկիաների և պայթման խողովակների՝ կիմբերլիտային (ալմազակիր), ալկալային գերիիմքային կարքոնատիտներով, նեֆելինային սիենիտների կենտրոնական ինտրոկիաների:
- Հին պլատֆորմների վաղ էտապների և վահանների՝ միզմատիտների և անատեկտիտների, հիպերստենային գրանիտների (չառնո-

կիտների), դիմումացված գաբրոների և նորիտների, ռապակիվի գրանիտների, անորողիտների:

Հնարկենք նաև երկրակեղեցի խոշոր կառուցվածքների գլխավոր ֆորմացիաները նրանց զարգացման փուլերով և ենթափուլերով:

Զարգացման բուն գեոսինկլինալային փուլում ամենաբնորոշ ֆորմացիաներն են.

- *Թերթաքար* - գրատվակային (թիթեղմաքարային) ֆորմացիա - ներկայացված է սև արգիլիթային թերթաքարերի հզոր ստվարաշերտերով և բազմակազմ (ալոխմիկտային) ավազաքարերի ու սև կայծքարերի նրբաշերտերով: Կտրվածքի հիմքում հանդիպում է նաև տերթիգեն (ցամաքածին) ֆորմացիան, որը կազմված է գլխավորապես ավազաքարերից:
- *Սպիլիտային ֆորմացիա* - այն էապես հրաբխածին ֆորմացիա է ներկայացված բազալտների, սպիլիտների, դիաբազների, քվարցային ալբոտոֆիրների հզոր ստվարաշերտերով և արգիլիթների ու կայծքարային թերթաքարերի, երեմն կրաքարերի նրբաշերտերով: Այն հարում է իջվածքներին:
- *Անդեզիտային ֆորմացիա* - ներկայացված է միջին թթվայնության հրաբխային առաջացումներով (անդեզիտային լավաներով, տուֆերով, խարամներով և այլն), որոնք ձևավորվում են ներքին բարձրացումներում և կրաքարային աղեղներում: Հաճախ այդ ֆորմացիաները գուգորդվում են խուրային կրաքարերով:
- *Հրաբխակայծքարային (էֆուզիվ - ոսդիոլարիտային՝ օֆիոլիտային) ֆորմացիա* - ներկայացված է սպիլիտներով, դիաբազներով, գնդաձև բազալտներով, հասպիսներով, ոսդիոլարիտներով: Կազմում է օֆիոլիտային համալիրի (եռյակի՝ սերպենտինիտ - զարք - դիաբազ) վերին մասը և հատուկ է օվկիանոսային կեղևի ու սուրդուցինն գոտիներին:
- *Կրաքարային և կարրոնատատերիզեն ֆորմացիաներ* - ներկայացված են համապատասխանաբար մուգ մոխրագույն կրաքարերով և կրաքարերի, ավազաքարերի, ալկրոլիթների ու արգիլիթների շերտերի հերթագայումներով: Այս ֆորմացիաները հասուլ են նստվածքակուտակման ավազանների ճկման զարգացած փուլերին:

- **Ֆիշային ֆորմացիա - ներկայացված է տարբեր ապարների (ավագարեր, ալկոտիլիներ, արգիլիներ և այլն) ռիթմիկ (կրկնվող) հաջորդականությամբ ու բնորոշ է ճկվածքների մեծ մասին:**

Երբեմն հանդիպում են խառը (հրաբխածին-նստվածքային) ֆորմացիաներ: Օրինակ, անդեզիտ - դաշիտ - տերրիգեն կամ անդեզիտ - դաշիտ - ռիոլիտ - տերրիգեն ֆորմացիաներ:

**Հրային - ներժայթքային (ինտրուզիվ)** ֆորմացիաներից տարածքի տեկտոնական զարգացման վաղ փուլի համար տիպիկ են **հիպերրազիտային և զարրո - պիրոքսենիտ - լրոնիտային** ֆորմացիաները: Ծալքավորության գլխավոր և եզրափակիչ փուլի սահմանում առաջանում են **զրանիտոդային** ֆորմացիայի խոշոր բարոլիտները: Այդ ֆորմացիան երկարատև է ձևավորվում և անցնում հաջորդ՝ օրոգեն, փուլ:

Տեկտոնական զարգացման եզրափակիչ (օրոգեն) փուլին շատ բնորոշ են.

- **Մոլասային ֆորմացիա - տերրիգեն ապարների ստվարաշերտեր ներառող կոնվոլմերատների հզոր շերտն է, որը կազմված է ապարների գլաքարերից, որոնք առաջացել են տեկտոնական զարգացման եզրափակիչ փուլի ճկվածքներում և ծալքավորման ու լեռնագոյացման հետևանքով հետագայում ընդգրկվել են բարձրացման ու լվացման արդցեսի մեջ:**
- **Ավազակավային ֆորմացիա (ստորին մոլաս) - բնորոշ է վաղ օրոգեն (կոլիզիոն) փուլին և կարող է լինել ծովային, ծովալճային (աղաքեր կամ ածխաբեր՝ կախված կիմայից) կամ ցամաքային (լճաածխաբեր ֆորմացիա): Այս փուլին տիպիկ է նաև խութային կրաքարերի ֆորմացիան:**
- **Խոշորաբեկոր գլաքարերի ու բրեկչիաների ֆորմացիա (վերին մոլաս) - բնորոշ է ուշ օրոգեն (կոլիզիոն) փուլին:**
- **Հրաբխային (պորֆիրային) ցամաքային ֆորմացիա - ներկայացված է անդեզիտային բազալտներով, ոխոլիտներով, նրանց տուֆերով, տուֆաբրեկչիաներով, իգնինբրիտներով (ուշ օրոգեն փուլ):**
- **Ավազակավային և խեցաքարային կրաքարերի ֆորմացիաները ձևավորվում են ուշ օրոգեն փուլում լճածովային և ծովային պայմաններում:**

Օրոգեն փուլի ֆորմացիաները հարում են միջլեռնային և եզրային ճկվածքներին, ընդ որում, վերջինների մեջ հրաբխային ֆորմացիաները բացակայում են:

Եզրափակիչ օրոգեն փուլին հրային - ներժայքային (մազմայական) ֆորմացիաներից հատուկ են.

- գրանիտոփային ֆորմացիա (վաղ օրոգեն փուլ) - կախումային գրանիտների ինտրուզիվ բարոլիտների առաջացմամբ,
- ալկալային գրանիտոփային և ալկալային ապարների ֆորմացիա - փոքր ինտրուզիվ մարմինների առաջացմամբ (շտոկներ, լակո-լիստներ, լոպոլիտներ, օղակաձև մարմիններ):

Ինտրուզիվ ֆորմացիաները միշտ կապված են բարձրացման գոտիների հետ:

- Պլատֆորմներին բնորոշ են հետևյալ նստվածքային ֆորմացիաները.
- *Ստորին կամ տրանսգրեսիվ ծովային տերրիգեն ֆորմացիա*՝ քվարցային կամ արկողային ավազների (ավազաքարերի), մուգ կավերի ու ավազաքարերի, սև բիտումնաբեր կավերի, քվարց - գլաուկոնիտային ավազների (ավազաքարերի) մասնավոր ֆորմացիաներով: Բնորոշ են պլատֆորմային ճկվածքների զարգացման վաղ տրանսգրեսիվ փուլին:
  - *Կրաքարային ֆորմացիա*՝ ներկայացված բաց, հաճախ սպիտակ կրաքարերով ու մերգելներով: Բնորոշ է ծովի առավելագույն տրանսգրեսիայի դարակարգին:
  - *Էվասպորիտ - կարմրավուն ֆորմացիա*՝ խայտաբղետ գունավորված ավազների ու կավերի, կրաքարերի, մերգելների, դոլոմիտների, գիպսերի, քարաղերի:
  - *Մոխրագույն ածխաքեր ֆորմացիա*՝ մոխրագույն կավերի ու ավազաքարերի, ածխի ու կրաքարերի շերտերով:

Վերջին երեք ֆորմացիաները բնորոշ են ռեզրեսիվ փուլին՝ բարձրացումների սկզբին և սովորաբար ձևավորվում են լճածովային պայմաններում:

*Հարմարավուն կաղլին - քվարց - ավազային, ծածկութային - սառցադաշտային ցամաքային ֆորմացիաները ձևավորվում են կուտակման դարակարգի վերջին փուլում:*

Պլատֆորմների համար հրային ֆորմացիաներից ամենաբնորոշը տրապայինն է: Նրա կազմում առանձնացվում են պլատո - քաղալտները, որոնք կազմված են տողեխտ - քաղալտային մազմայի ապարներից (դոլերիտներ, դիաքազներ, քաղալտներ) և նրանց ենթակա անդեղիտներն ու ալկալային ապարները: Էֆուզիվ ծածկուների հետ տարածված են սիլերը, շտոկները և դայկաները: Ավելի հազվադեպ հանդիպում են ալկալային քա-

զալտային էֆուզիվների (տրախիբազալտների), գարբո - գրանիտային, ալկալային հնտրուզիաների, կիմքերլիտային և ուրիշ ֆորմացիաներ:

Հաճախ կարելի է տեսնել, որ մայրցամաքային պլատֆորմները երկրակեղևի գլխավոր կառուցվածքային էլեմենտների աստիճանական զարգացման շարքի վերջնական անդամ չեն: Պլատֆորմների տեղում, մի շարք տարածաշրջանների օրինակով (Տյան-Չան, Ալթայ և այլն), առաջանում են օրոգեն (լեռնագոյացման) գոտիներ: Այդ կառուցվածքները Ա.Լ. Յանշինի, Վ.Ե. Խայնի, Ս.Ս. Շուլցի առաջարկությամբ կոչվում են Էպիպլատֆորմային օրոգեն գոտիներ:

Էպիպլատֆորմային օրոգեն գոտիներին բնորոշ են բեկորային կարմրավուն, աղաքեր, ածխաբեր, կառուսորդիլիտային ֆորմացիաները:

Հրային գործունեությունը դրսնորվել է անհամասեռ և ներկայացված է հրաբխավլուտոնիկ զանգվածներով, ալկալային գրանիտոնիդների (շտոկներ, փոքր բարոլիտներ) և ալկալատոլիտային պլատորազալտների ֆորմացիաներով:

Ֆորմացիոն վերլուծության արդյունքները ներկայացվում են ֆորմացիոն սյունակի տեսքով, որտեղ բացի հրաբխածին-նստվածքայիններից, ցույց են տրվում ինտրոզիվ ֆորմացիաները:

Ֆորմացիաների վերլուծության արդյունքները կիրառվում են նաև տեկտոնական շրջանացման ու տեկտոնական զարգացման հիմնական փուլերի որոշման համար:

Տեկտոնամագմատիկ ակտիվացման մարգերին բնորոշ են տարատեսակ նստվածքային և հրաբխածին ֆորմացիաներ, մասնավորապես՝ մայրցամաքային մոլասային ածխաբեր և խայտարդես նստվածքային ու ցամաքային հրաբխածին (ոլոյլիտային, անդեզիտային, դացիտային, տրախիանդեզիտային) ֆորմացիաները:

Սուրբուկցիոն զոնաներին բնորոշ են կղզաղեղային անդեզիտ - անդեզիտաքազալտային հրաբխածին ֆորմացիաները, իսկ ճակատային մասերին՝ սպիլիտ-բազալտային, հրաբխածին-կայծքարային, ֆլիշային և տուրբիդիտային առաջացումները:

## 1.5. Հրային ապարների հասակի որոշման մեթոդները

**1.5.1. Էֆուզիվ ապարների հասակի որոշում:** Սա բարդ և դժվար խնդիր է և բույլ է տալիս այս կամ այն հավաստիությամբ որոշել մի շարք

հարցեր: Դիտարկենք էֆուզիվ ապարների հասակի որոշման մի քանի եղանակներ.

1. Հայտնի են էֆուզիվ ապարներ, որոնցում պարունակվում են ստորգրյա արտավիժումների ժամանակ լավաներով ընգրկված քայլայված կենդանի մարմինների և նրանց կմախրների դատարկություններ: Ծովային ֆառնայից դատարկություններ հանդիպում են նաև տուֆերում: Եթե բրանք լցնել գիտով, ապա կարելի է ստանալ բրածո կենդանիների ձևերի ծեփապատճեններ և անմիջապես որոշել հրաբխային ապարների հարաբերական հասակը:

2. Հրաբխանստվածքային ստվարաշերտերը հաճախ պարունակում են բրածո կենդանիների, բեղմնիկների (սպոր, անձաղիկ բույսերի բազմացման օրգաններ) և ծաղկափոշու մնացորդներով նստվածքային ապարների շերտեր: Բրածոներ հայտնաբերելու համար հատկապես բարենպաստ են կրաքարերը, մերգելները և ռատիոլարիտները: Եթե բրածոներով շերտերը գտնվում են հրաբխանստվածքային համալիրներում, ապա նրանք հնարավորություն են տալիս հիմնավորված որոշել էֆուզիվ ստվարաշերտերի հասակը: Բույսերի բեղմնիկներն ու ծաղկափոշին առավել հաճախ հանդիպում են կավամերգելային թերթաբարային ապարներում:

3. Հրաբխածին ստվարաշերտերի հասակը կարող է որոշվել նաև դրանք ծածկող և ներքնարկող նստվածքային ապարների հասակի հիման վրա:

4. Էֆուզիվ ապարների վերին հասակային սահմանը հնարավոր է որոշել նրանց վրա ֆառնայով բնութագրված ստվարաշերտերի տեղադրումով: Էֆուզիվները այդ դեպքում կիննեն ավելի հին հասակի:

5. Ստորին հասակայն սահմանը, երբեմն, որոշվում է լավաներով ներքնարկող ստվարաշերտերի վերին մասերից ընդգրկված ապարների բեկորներով: Եթե բեկորների հասակը որոշված է, ապա դա հիմք է տալիս էֆուզիվներին համարել ավելի երիտասարդ, քան նրանց մեջ պարունակվող բեկորները (քսենոլիտները):

**1.5.2. Ինսորուզիվ առաջացումների հասակի որոշում:** Լայն տարածում են ստացել ինսորուզիվ ապարների բացարձակ հասակի որոշման մեթոդները, որոնք հիմնված են ինսորուզիվ ապարները կազմող միմերալներում պարունակվող ռադիոակտիվ տարրերի տրոհման նյութերի քանակական որոշման վրա: Այդ մեթոդների շարքում ավելի հաճախ կիրառվում են

կալիում- արգոնային, ուրան-կապարային և ռուբիդիում-ստրոնցիումային մեթոդները:

Ոչ պակաս կարևոր նշանակություն ունի ապարների հարաբերական հասակի որոշումը, որը հենված է ինտրուզիաների առաջացման ժամանակ գոյություն ունեցած ներփակող ապարների հասակի հետ համեմատման վրա: Ինտրուզիայի փոխհարաբերությունը շրջապատող ապարների հետ կարող է արտահայվել կամ ինտրուզիայի ակտիվ ազդեցությամբ ներփակող ապարների վրա, կամ ինտրուզիվ զանգվածի լվացված (հողմնահարված) մակերեսի հետաքա նստվածքներով տրանսգրեսիվ ծածկումով: Ակտիվ կոնտակտը վկայում է ինտրուզիայի ավելի երիտասարդ հասակի մասին՝ համեմատած ներփակող ապարների հետ: Ակտիվ կոնտակտի բնորոշ հատկանիշներն են՝ ա) շրջապատող ապարների փոփոխված բեկորների առկայությունը ինտրուզիայում, բ) ինտրուզիայից ներփակող ապարների մեջ քափանցող ապոֆիզների (ճուղավորումների) առկայությունը, գ) կոնտակտային ազդեցության հետևանքով ներփակող ապարների վերաբյուրեղացումը և այլ փոփոխություններ:

Նստվածքային կամ իրաբեկորային ապարների տեղադրման դեպքում ինտրուզիայի երողիոն լվացված մակերեսի վրա նշված երևոյթները, որոնք բնորոշ են ակտիվ կոնտակտին, բացակայում են և այդ դեպքերում տրանսգրեսիվ տեղադրված ստվարաշերտերի ամենաստորին շերտերում (հիմքի հորիզոնում) միշտ ներկա են ինտրուզիվ ապարի քայլայման նյութերը մեծաքերորների, գլաքարների և առանձին միմերալների տեսքով:

## 1.6. Մետամորֆային ապարների քարտեզների վերլուծություն

Վերլուծելով մետամորֆային ապարների տարածման մարգերի քարտեզները, անհրաժեշտ է պարզել երկրաբանական կառուցվածքի հիմնական գծերը որոշող նշանները:

Այդպիսի նշաններ կարող են լինել.

1. Տարածաշրջանային մետամորֆիզմի տարբեր աստիճանները բնորոշող ստվարաշերտերի առկայությունը: Սովորաբար մետամորֆիզմի հերթափոխումը առնչվում է խոշոր աններդաշնակությունների մակերեսների հետ:

2. Նշված ստվարաշերտերի հետ կապված ինտրուզիվ կոմպլեքսների առկայությունը, ինչպես նաև ծալքերի ձևաբանությամբ ու տարածմամբ տարբերվող տարահասակ ծալքավորության համալիրների ներկայությունը:

Բոլոր այդ հատկանիշները՝ մետամորֆիզմը, ինտրուզիվ մագմատիզմը, ծալքառաջացումն ու աններդաշնակությունները, արտահայտում են օրոգենետիկ (լեռնազոյացման) դարակարգերը. օրինակ, քայլայան (մինչև 600 մլն տարի): Դրա մասին եզրահանգումներն արվում են մետամորֆային ապարների հիման վրա:

Մետամորֆային համալիրների ներքին կառուցվածքի որոշման դեպքում մեծ նշանակություն ունեն վերլուծվող երկրաբանական քարտեզի վրա բնորոշիչ հորիզոնների ու շերտերի (մարմարներ, քվարցիտներ), բուդինամի (փրփածք) կառուցվածքների, մագմատիկ մարմինների հետամտումը, ինչպես նաև թերթայնության ու «գնեխսայնության» տարածումը և այլ կառուցվածքային տարրերը նշող հատուկ պայմանական նշանների մեկնաբանումը: Նկարագրված առաջացումների տարածական դիրքի վերլուծությունը թույլ է տալիս պատկերացում կազմել մետամորֆային համալիրների կառուցվածքի, առանձին ծալքերի բնույթի մասին, հնարավորություն է տալիս որոշել նրանց տարածումը և նշել շարնիրների (հողակապ) խորասուզման տեղամասերը:

## **2. ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՓՈԽԼԵՐԸ**

Կուրսային աշխատանքի կատարումը բաժանվում է երեք փուլի:

Առաջին փուլում իրականացվում է երկրաբանական քարտեզի վերլուծություն, մասշտաբի որոշում, մանրամասն ծանոթացում տեղագրական (տոպոգրաֆիական) հիմքի հետ: Արդյունքում պարզվում են ռելիեֆի առավել բնորոշ գծերը՝ էրոզիոն կտրվածքի խորությունը, լանջերի բնույթը, գետային ցանցի ուրվագիծը (ուրվանկարը):

Աշխատանքի նույն փուլում կատարում են քարտեզի վերլուծություն երկրաբանական ծանրաբենվածության և երկրաբանության արտահայտման առանձնահատկությունների տեսակետից, նշում են քարտեզի պայմանական նշանների ու գոյություն ունեցող հրահանգների միջև եղած տարրերությունները:

Աշխատանքի երկրորդ փուլը ներկայացնում է կոնկրետ երկրաբանական տվյալների՝ շրջանի շերտագրության, հրային ապարների, տեկտոնիկայի ուսումնասիրությանը:

Շերտագրական ուսումնասիրությունը կատարվում է շերտագրական սյունակի և երկրաբանական քարտեզի վերլուծության հիման վրա: Նյութեր են հավաքվում ֆորմացիաների վերաբերյալ: Պարզվում է յուրաքանչյուր շերտագրական ստորաբաժանման տարածումը, որոշվում են աններդաշնակությունները: Անհրաժեշտ է տարրերել նստվածքների ելքը երկրի մակերեսին և, ընդհանրապես, նրանց տարածումը: Վերջինը կարելի է որոշել հորատանցքերի տվյալների ու ստվարաշերտերի սեպավորման վերլուծության հիման վրա: Այդ դեպքում եղրակացություններ են արվում ֆացիաների և առանձնացվող ստորաբաժանումների հզորությունների փոփոխման օրինաչափությունների մասին:

Նման ձևով ուսումնասիրվում են նաև ինտրովիվ և ենթահրաբխային մարմինները: Անհրաժեշտ է պարզել ինտրովիվ մարմինների տեղադրությունը, որոշել ներփակող և ծածկող ապարների հասակը, ինտրովիվ մարմինների ձևը պլանում և, հնարավորին չափ, կտրվածքում: Որոշել նրանց փոխհարաբերությունը ներփակող ապարների հետ և նիմյանց միջև:

Հաստ մարմինների մեծության և ձևի, հրային մարմինները պետք է վերագրել այս կամ այն ձևաբանական տիպին (բարոլիտ, շտոր, լակոլիտ, սիլ, դայկա և այլն): Եթե քարտեզի վրա կան տվյալներ նրանց կոնտակտային պսակների վերաբերյալ, ապա անհրաժեշտ է դրանք օգտագործել ինտրովիաների ձևերի բնութագրման համար:

Քարտեզի վերլուծության եղանակով պետք է որոշել ինտրովիվ ապարների հասակը, իսկ եթե այն կա պայմանական նշաններում, ապա պետք է ստուգել և հիմնավորել հասակային սահմանների մերոդրությունը:

Տեկտոնիկայի վերլուծության նպատակն է, առաջին հերթին, նրա հիմնական գծերի պարզաբանումը. տարբեր կառուցվածք ունեցող տարածքների (շարժուն ծալքավոր մարզերի կամ պլատֆորմային), տարբեր տեսակի ծալքավոր կոնվլեքսների (անտիկլինալ կամ սինկլինալ) և տարատեսակ կտրվածքով գոտիների առանձնացումը:

Այդ նպատակով, բացի համեմատական տեկտոնական վերլուծության, ֆացիաների և ֆորմացիաների վերլուծության մեթոդներից, անհրաժեշտ է լայնորեն կիրառել երկրաբանական կտրվածքների կառուցումը (Հավելված 2): Այլ խոսքով, կատարվում է տեկտոնական շրջանացում: Այն կայանում է նկարագրվող տարածքում գլխավոր կառուցվածքային տարրերի (խոշոր կառուցյների) առանձնացմանը: Եթե նրա սահմաններում կան տեղամասեր, որոնք տարբերվում են երկրաբանական զարգացման պատմությամբ, առաջին հերթին, շերտագրական կտրվածքի կառուցվածքով, մագմատիզմի բնույթով, ինչպես նաև ծալքավորության ու խզվածքների տիպերով, ապա շրջանացման հիմք պետք է ծառայեն պատմաերկրաբանական վերլուծությունը, ֆացիալ - կառուցվածքային կամ կառուցվածքաֆորմացիոն սկզբունքները: Պատմաերկրաբանական վերլուծության հիման վրա կարող են առանձնացվել պլատֆորմների, գեոսինկլինալային ծալքավորության, առանձին ճկվածքների ու երկրակեղեղի բարձրացման, կղզաղեղային գոտիների և այլ կառուցվածքաֆորմացիոն մարզերը:

Եթե ամբողջ տարածքը գտնվում է միասնական խոշոր կառուցվածքաֆորմացիոն մարզի սահմաններում, ապա շրջանացումը կարող է հենվել ֆացիալ - կառուցվածքային կամ կառուցվածքային վերլուծության վրա կարող են առանձնացվել պլատֆորմների, գեօսինկլինալային ծալքավորության, առանձին ճկվածքների ու երկրակեղեղի բարձրացման, կղզաղեղային գոտիների և այլ կառուցվածքաֆորմացիոն վրա:

Այն դեպքում, եթե քարտեզի վրա առկա է ֆացիաների ու հզորությունների փոփոխությունները բնորոշող համապատասխան նյութը, առանձնացվում են ֆացիալ - կառուցվածքային գոտիներ, այսինքն տարածքներ, որոնք տարբերվում են կտրվածքի կառուցվածքով և տեկտոնական զարգացման բնույթով, օրինակ՝ ճկվածքների թևերն ու առանցքային հատվածները:

Կառուցվածքային սկզբունքի հիման վրա կարող են առանձնացվել (որպես տեկտոնական շրջաններ - գոտիներ) ծալքավորության տարբեր

տիպի և տարածման տեղամասեր, առանձին անտիկլինորիումներ ու սին-կլինորիումներ:

Հետագայում, առանձին տեղամասերի ավելի մանրամասն վերլուծ-ման եղանակով որոշվում է ծալքերի ձևաբանությունն ու առաջացման ժա-մանակը, աններդաշնակությունների տիպն ու նշանակությունը, նախա-պատրաստվում են տվյալներ կառուցվածքային հարկերի առանձնացման համար, այսինքն, կատարվում է տեկտոնական զարգացման հիմնական փուլերի անշատում:

Կառուցվածքային հարկի առանձնացման հիմնական հատկանիշ-ներն են մեծ շերտագրական ընդմիջումն ու կտրուկ անկյունային աններ-դաշնակությունը հարող շերտագրական միավորների միջև, բնորոշ կա-ռուցվածքային պլանն ու յուրահատուկ մազմատիզմը:

Ցուրաքանչյուր կառուցվածքային հարկ համապատասխանում է երկրակեղեղի զարգացման խոչոր փուլին: Հնարավոր է նաև կառուցված-քային ենթահարկերի ու կոմպլեքսների առանձնացում: Կառուցվածքային կոնվլեքսներն ընդգրկում են երկու - երեք կառուցվածքային հարկ և հա-մապատասխանում են երկրակեղեղի զարգացման միասնական տեկտոնա-մազմատիկ փուլերին՝ բայկալյան, կալեդոնյան, հերցինյան և այլն, որոնք հայտնի են պատմական երկրաբանության դասընթացից (Հավելված 3):

Կառուցվածքային ենթահարկերն իրենցից ներկայացնում են կա-ռուցվածքային հարկերի մասեր, որոնք, նույնպես, կտրվածքներում սահ-մանափակված են աններդաշնակության մակերեսներով: Սակայն, դրանք կարող են ունենալ միայն տեղական տարածվածություն: Ենթահարկերը կարող են համապատասխանել երկրաբանական զարգացման առանձին փուլերին: Օրինակ վաղ ալպյան, վաղ օրոգեն, ուշ օրոգեն և այլն:

Առանձնացված տեկտոնական գոտիներն ու կառուցվածքային հար-կերը տեղադրվում են միաժամանակ կազմվող տեկտոնական քարտեզի վրա:

Տեկտոնական շրջանացումից և կառուցվածքային հարկերի առանձ-նացումից հետո անհրաժեշտ է անցնել կառուցվածքի ավելի մանրակրկիտ ուսումնասիրությանը: Այն կատարվում է առանձնացված տեկտոնական գոտիներով ու կառուցվածքային հարկերով: Բացահայտվում են առանձին ծալքեր ու խզվածքային խախտումներ: Որոշվում է ծալքերի տիպը պլա-նում և կտրվածքում (գծային, գմբեթաձև, բրախի, նորմալ, իզոլինիալ, ու-ղիղ, թեր, պառկած ծալքեր և այլն), ծալքի շարնիրի (ծալքի հողակապ) վարքագիծը, երկարությունն ու լայնությունը, փականի ձևը: Ծալքերի ու-

սումնասիրությունն ուղեկցվում է տեկտոնական քարտեզի և երկրաբանական կտրվածքների կազմումով։ Կտրվածքներում որոշվում է ծալքերի ամպլիտուդը, լայնակի հատումներում ուսումնասիրվում նրանց կառուցվածքը՝ առանցքային նակերեսների դիրքը, ծալքերի սեղմվածության աստիճանը, թևերի փոխհարաբերության բնույթը և թեքության աստիճանը։ Բացահայտվում են ծալքերի տիպերն ըստ փականներում և թևերում շերտերի հզորությունների փոխհարաբերությունների։ Որոշվում է ծալքավորության հասակը (տես՝ նկ. 7-12):

Ուսումնասիրվում են միաթեքությունները (մոնոկլինալները)։ Նրանց ձեր տեկտոնական քարտեզի վրա անհրաժեշտ է պատկերել ստրատիգոփիպսերի օգնությամբ։ Որոշվում են նրանց տարածումը և տարբեր տեղամասներում շերտերի թեքությունների փոփոխությունները։

Խզվածքային խախտումները հարկավոր է վերլուծել նրանց նշանակության տեսակետից։ Հասուկ ուշադրություն պետք է դարձնել խորը տեղադրված և երկարատև զարգացման խոչըր ռեզինալ խզվածքների վրա։ Նրանք որոշվում են բաժանվող բլոկների շերտագրական կտրվածքի տարբերությունների հիման վրա, ինչպես նաև նրանց մեջ ինտրոզիվ մարմինների առկայությամբ։ Գերիհմքային ապարների ներկայությունը մատնանշում է խորքային բեկվածքների առկայությունը։ Նույն բանն են վկայում հարակից բլոկների կառուցվածքի մեծ տարբերությունները։

Մնացած խզվածքները խմբավորվում են համակարգերի, որոնք բնորոշվում են համանման տարածմամբ և կառուցվածքի տիպով։ Որոշվում են նրանց հարաբերական հասակն ու առաջացման ժամանակի հասակային սահմանները։ Ուսումնասիրվում են խզվածքային խախտումների տարածական դիրքը, փոխհարաբերությունները ռելիեֆի ձևերի ու ծալքերի հետ։ Այնտեղ, որտեղ հնարավոր է, որոշվում է խզվածքի անկման անկյունը (եթե այն նշանակած չէ քարտեզի վրա)։

Անհրաժեշտ է բացահայտել խզվածքի տեսակն ու անվանակարգը ըստ դասակարգման։ Հնարավորության դեպքում անհրաժեշտ է որոշել տեղաշարժման ամպլիտուդը։

Բոլոր այս տեղեկությունները կարելի է ստանալ երկրաբանական քարտեզի և կտրվածքների վերլուծության միջոցով։

Քարտեզի վերլուծության և շրջանի տեկտոնիկայի վերաբերյալ տվյալների հիման վրա կազմվում են տեկտոնական քարտեզն ու շրջանի կառուցվածքն առավել բնորոշող երկրաբանական կտրվածքները։ Կտրվածքները կարող են լինել երկուսից մինչև վեց հատ։

Կատարված վերլուծության շնորհիվ բացահայտվում են ուսումնասիրվող շրջանի առանձին տեղամասերի երկրաբանական կտրվածքների տարրերությունները: Դրանք, առաջին հերթին, արտահայտվում են շերտագրական կտրվածքների կառուցվածքի տարրերություններով և տարրեր ֆորմացիաների առկայությամբ: Այսպիսի եզրակացությունները հաստատվում են միևնույն հասակի նստվածքների կազմով և հզորություններով տարրերվող տեղամասերի շերտագրական սյունակներով:

Օգտակար հանածոների առկայությունը, նրանց բաշխման օրինաչափություններն ու հայտնաբերման հնարավորությունները բացահայտվում են քարտեզի պայմանական նշանների, նստվածքային ու հրային ապարների լիբոլոգիական և պետրոգրաֆիական կազմի, ընդհանուր կառուցվածքի վերլուծության հիման վրա:

Ոչ մետաղական օգտակար հանածոները (ածուխ, աղեր, դղլոմիտ, կրաքար, գիպս և այլն) սովորաբար նշվում և բացատրվում են պայմանական նշաններով ու շերտագրական սյունակում: Բացի այդ, պայմանական նշանների և սյունակի վերլուծության հիման վրա կարելի է որոշել նշված օգտակար հանածոների տարածվածությունը, հզորությունը, որակն ու հեռանկարները: Որպես հնարավոր օգտակար հանածոներ, կարելի է առանձնացնել տարրեր շինանյութերի, օրինակ երեսպատճան քարերի՝ մարմարներ, գրանիտներ, գարբոներ, ավազներ, կավեր և այլն տեղամասեր:

Ըստ ուսումնասիրվող շրջանի տնտեսաաշխարհագրական իրավիճակի, կուտակումների ծավալների ու որակի, ոչ մետաղական օգտակար հանածոները կարող են ունենալ հանրապետական կամ տեղական նշանակություն:

Մետաղական օգտակար հանածոների հեռանկարները պարզելու համար առաջարկվում է ուսումնասիրվող քարտեզի վրա վերլուծել ինտրովիկ զանգվածների ու դայլային մարմինների կազմը, ծավալը, նրանց կոնտակտների փոփոխվածության աստիճանը, բնույթը (սկաների, եղջրաքարերի առկայությունը), հիդրոքերմալ փոփոխված ապարների առկայությունը, նրանց տեսակը և այլն: Հայտնի է, որ Էնդրոգեն (ներծին) ծագման յուրաքանչյուր մետաղական օգտակար հանածո ունի հայտնաբերման յուրահատուկ նախանշաններ: Աշխատանքի ընթացքում ուսանողն առաջին անգամ փորձում է տարածքի երկրաբանական կառուցվածքի վերլուծության հիման վրա առանձնացնել օգտակար հանածոների կուտակումների հայտնաբերման համար անհրաժեշտ որոնողական երկրա-

բանական նախադրյալներն ու հատկանիշները և տալ մետաղածնության կանխատեսման գնահատականը: Հետազայում այս փորձը կխորացվի «Օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանություն», «Օգտակար հանածոների հանքավայրերի որոնում և հետախուզում» և այլ մասնագիտական դասընթացներում:

Օգտակար հանածոների վերաբերյալ եզրակացություններն ուսանողները պետք է արտահայտեն երկրաբանական քարտեզի վրա հատուկ պայմանական նշանների օգնությամբ (Հավելված 7) և հաշվետվության տեքստում: Երկրաբանական նյութերի (երկրաբանական քարտեզ, շերտագրական սյունակ, կտրվածքներ) վերլուծության տվյալները ուսանողները սևագրում են, կոնսպեկտավորում, որից հետո անցնում են կորսային աշխատանքի երրորդ փուլ՝ տեքստային մասի ձևակերպմանը:

### **3. ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂՄԱՆԱՅԻՆ ՍԱՍԸ**

Տեքստային մասի ծավալը պետք է կազմի 25 – 30 էջ, առավելագույնը՝ 40 էջ: Տիտղոսաթերթի ձևակերպման օրինակը բերվում է հավելված 1-ում: Աշխատանքի բովանդակությունը պարունակում է հետևյալ բաժինները:

- Ներածություն,
- Շրջանի տնտեսաաշխարհագրական ակնարկ, ռելիեֆի ու գետային ցանցի նկարագրություն /1/,
- Շերտագրություն /2/,
- Հրային առաջացումներ (մագմատիզմ) /3/,
- Տեկտոնիկա /4/,
- Օգտակար հանածններ /5/,
- Շրջանի երկրաբանական զարգացման պատմությունը /6/,
- Վերջաբան,
- Գրականություն և հավելվածներ (տեքստային, աղյուսակային, գծագրական):

#### **Ներածություն**

Տեղեկացվում է աշխատանքի կոնկրետ նպատակների, խնդիրների ու մեթոդների մասին: Տրվում է քարտեզի տեղագրական հիմքի և երկրաբանական ծանրաբեռնվածության բնութագիրը: Նկարագրվում է քարտեզի տիպն ու մասշտաբը, տվյալ մասշտաբին քարտեզի երկրաբանական ծանրաբեռնվածության համապատասխանությունը: Ներկայացվում են աշխատանքի ծավալը, բովանդակությունը, տարածքը լուսաբանող նկարների, գծագրական, աղյուսակային հավելվածների առկայությունը, հիմնական արդյունքներն և այլն: Ներածության ծավալը՝ 1.5 – 2 էջ:

#### **Գլուխ I. Շրջանի տնտեսաաշխարհագրական ակնարկ, ռելիեֆի, գետային ցանցի նկարագրություն**

Բաժինը սկսվում է շրջանի ռելիեֆի ընդհանուր բնութագրումից (լեռնային, հարթավայրային): Լեռնային ռելիեֆի համար բացառակ նիշը բարձր է 500 մ-ից, բարձր լեռնայինի համար՝ 2000 մ-ից: Ապա տրվում է ռելիեֆի մակերևույթի ընդհանուր բնութագիրը: Առանձնացվում են գիսավոր և երկրորդական լեռնաշղթաները, ցույց է տրվում նրանց դիրքը: Նշվում են քարտեզի վրա գոյություն ունեցող հիմնական աշխարհագրա-

կան անվանումները: Հորիզոնականների վերլուծության հիման վրա որոշվում է լանջերի թերպածությունն ու նրանց կտրտվածության աստիճանը, նշվում է ժայռային զարդարագիրների ու կատարների առկայությունը:

Գետային ցանցի նկարագրությունն իրականացվում է ավազաններով՝ սկսելով ամենախոշոր գետից: Նշվում են գետի դիրքը, նրա ակունքները, հոսքի ուղղությունը, վտակները: Կախված հունի թերությունից որոշվում է գետի տիպը (լեռնային կամ հարթավայրային):

Տնտեսաաշխարհագրական ակնարկում նկարագրվում է շրջանի տնտեսական զարգացման աստիճանը, բնակավայրերի առկայությունը, նրանց քանակն ու տիպը, ճանապարհների առկայությունը, նրանց տիպը, գետերի նավարկելիության հնարավորությունը:

Բաժնի ծավալը՝ 2 – 2.5 էք:

## Գլուխ II. Շերտագրություն

Այս բաժնի գլխավոր խնդիրն է քարտեզի վրա առանձնացված շերտագրական ստվարաշերտերի տարածվածության ու նրանց փախհարաբերության նկարագրությունը: Կարևոր է հստակ ու համոզիչ հիմնավորել ներդաշնակ և, հատկապես, աններդաշնակ տեղադրման առկայությունը:

Բաժնի սկզբում տրվում է նախարան՝ շրջանում տարածված խոշոր շերտագրական ստորաբաժանումների համառոտ ցանկը: Սովորաբար նշվում են խմբերը, համակարգերը, երրեմն՝ բաժինները, նկարագրվում են ուսումնասիրվող շրջանում ըստ հասակի ու կազմի գերակշռող ապարները: Համառոտ տրվում է ստվարաշերտերի ընդհանուր տեղադրման բնույթը (հորիզոնական, միարեք կամ ծալքավոր): Նախարանը պետք է ունենա առավելագույնը 1 էջ ծավալ:

Այնուհետև սկսվում է քարտեզի վրա առանձնացված ստորաբաժնների նկարագրությունը: Այն կատարվում է ներքեցի վերև՝ հին ապարներից երիտասարդ ապարները և բաժանվում է մասերի խոշոր միավորներով՝ համակարգերի խմբերով:

Համակարգի վերնագրից հետո տրվում է կարճ նախարան՝ տվյալ շրջանում համակարգի կազմում ինչ ստորաբաժիններ են մտնում, այդ հասակի նատվածքների տարածվածության ընդհանուր բնութագիրը (լայն, սահմանափակ): Նշվում է համակարգի ընդհանուր հզորությունը: Ստորին մասում գրվում է բաժնի վերնագիրը: Եթե քարտեզի տարածքում համակարգերի քանակը քիչ է, իսկ շերտագրական ստորաբաժիններինը շատ, ապա վերը նշված բնութագիրը տրվում է բաժնի համար:

Այնուհետև նկարագրվում են տվյալ բաժնում ընդգրկված ստորաբաժնները (Ենթաբաժին, հարկ և այլն): Եթե ուսումնասիրվող տարածքում դրանք շատ են, ապա դրանցից երկու - երեքը կարելի է միավորել (նրանց միջև ներդաշնակ տեղադրման պայմաններում): Յուրաքանչյուր նկարագրության սկզբում տրվում է անվանումը՝ քարտեզի վրա նշված ինդեքսի հետ միասին:

Օրինակ, վերին կավիճ, կամպան - նասատրիխտ (ԿՀԾԲ-Մ):

Առաջին հերթին նկարագրվում է ստորաբաժնի նստվածքների ելքերի տարածումն ըստ տարածվածության: Ելքերի կողմնորոշումն անհրաժեշտ է տալ ըստ աշխարհագրական անվանումների կամ կետերի: Չի կարելի տալ ապարների ելքերի հաջորդական կողմնորոշումն ավելի վաղ նկարագրված ապարների ելքերով: Օրինակ, գրել «Կավճի նստվածքները մերկանում են նույն տեղում, որտեղ յուրայի ապարներն են» սխալ է: Պետք է գրել «Կավճի նստվածքները մերկանում են Խնձօրուտ գետի աջ վտակի գետաբերանում, որը գտնվում է Այգեձոր գյուղի 750 մ դեպի հյուսիս»: Ցանկալի է տալ նկարագրվող ապարների ելքերի չափերը:

Որևէ ստվարաշերտի սեպավորման դեպքում, որը որոշվում է մակերեսային ելքերով կամ հորատման տվյալներով, անհրաժեշտ է նկարագրել նրա տարածվածությունը շրջանում:

Տարածվածության նկարագրումից հետո բերվում են տվյալներ ստվարաշերտի և ներքնակող շերտերի փոխհարաբերության մասին: Տրվում է աններդաշնակության տեսակի ծավալուն բնութագիրը և դրա հիմնավորումը:

Շերտագրական աններդաշնակության հիմնավորման համար անհրաժեշտ է նշել, թե որ շերտագրական ստորաբաժնումներն են դրս ընկնում կտրվածքից, որտեղ է երևում ստվարաշերտի հատակի հատումը ներքնարկող ապարների սահմանների և ստորաբաժնների հետ: Նկարագրությունն ուղեկցվում է քարտեզի բնորոշ տեղամասերի պատճենահանմամբ:

Ներդաշնակ տեղադրումը նույնպես պետք է հիմնավորվի ստվարաշերտերի նորմալ հասակային հաջորդականությամբ և ամենուրեք նրանց սահմանների գուգահեռությամբ:

Տեղային աններդաշնակությունների առկայության դեպքում պետք է նկարագրել քարտեզի վրա նրանց տարածման մակերեսը:

Ապա պետք է տալ նստվածքների լիթոլոգիական կազմի համառոտ բնութագիրը, նշել շերտագրական ստորաբաժնների հզրությունը: Կարևոր

Է լիովին օգտագործել քարտեզի վրա և շերտագրական սյունակում գոյություն ունեցող բոլոր տվյալները նատվածքների ֆացիալ կազմի ու նրանց հզբուրյունների փոփոխությունների մասին: Փոփոխությունների առկայության դեպքում անհրաժեշտ է վերլուծել դրանց պատճառները:

Հրաբխածին ապարների նկարագրության ժամանակ, բացի վերը նշված հատկանիշներից (կազմ, հզորություն), անհրաժեշտ է լրսարաններ տեղադրման քննույթն ու կուտակման պայմանները:

Ստորջրյա արտավիժումների դեպքում ստվարաշերտերը, սովորաբար, կազմված են սպիլիտներով, որոնք հերթափոխվում են կայծքարային թերթաքարերով: Նրանց քննորոշ է նաև գնդաձև կամ բարձավոր անջատվածությունը: Հանդիպում են հասպիսներ և ծովային ծագման այլ նատվածքային ապարների նրբաշերտեր:

Ցանաքային էֆուզիվները, հաճախ, ուղեկցվում են վատ տեսակավորված տուֆերի շերտերով, լավաբրեկչիաններով: Երիտասարդ էֆուզիվներին (ալիոցենի ու չորրորդականի հասակի) քննորոշ է կազմ ժամանակակից ռելիեֆի ձևերի հետ:

Ստորաբաժանման նկարագրության վերջում բերվում են համառոտ տվյալներ քննարկվող շերտագրական միավորի հասակի և պալեոաշխարհագրական իրավիճակի նախ:

Բաժնի ծավալը՝ 8 – 12 էջ:

### **Գլուխ III. Հրային առաջացումներ (մազմատիզմ)**

Համառոտ նախաբանում նշվում է, որ տվյալ բաժնում քննարկվում են գլխավորապես ինտրուզիվ (ներժայթքային), սուրվուլկանիկ (ենթահրաբխային) և էքստրուզիվ (արտանյաժմայթքային) ապարները: Էֆուզիվ ապարները քննարկվել են նախորդ՝ «Շերտագրություն» բաժնում:

Քննութագրումը սկսվում է ինտրուզիվ կոմպլեքսների (համալիրների) բացահայտումով, որոնցից յուրաքանչյուրը բնորոշվում է որոշակի հասակով: Ինտրուզիվ համալիրները բազմափուլային առաջացումներ են, որոնք գոյանում են տարբեր կազմի մազմաների հաճախակի ներդրման ժամանակ:

Ինտրուզիվ համալիրների ուսումնասիրման ժամանակ առաջին հերթին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն ձևավորող ինտրուզիվ փուլերի բանակության վրա: Ինտրուզիվ ապարների նկարագրությունը կատարվում է առանձնացված համալիրներով (հներից երիտասարդը): Ակգրում բերվում են ընդհանուր տվյալներ՝ որտեղ է տարածված քննարկվող համա-

լիրը, նրա հասակը, ապարագրական կազմը: Թվարկվում են քննարկվող կոնյակերը կազմող ինտրովիկ զանգվածները:

Միևնույն հասակի առաջացումներից սկզբում պետք է քննութագրել հիմքայիններն ու գերիհմքայինները (հիպերբրազիտներ, պերիդոտիտներ, սերպենտինիտներ, գարրոններ, դրոնիտներ և այլն), այնուհետև միջին և քրու կազմի ինտրովիկ ապարները (դիորիտներ, գրանոդիորիտներ, գրանիտներ և այլն): Նկարագրության կարգը նոյնն է, ինչ որ շերտավոր ապարներին՝ տարածումը, փոխհարաբերությունները ներփակող ապարների հետ, ապարագրական կազմը և նրա փոփոխությունները:

Այնուհետև անհրաժեշտ է նկարագրել ինտրովիկ ապարների տեղադրման ձևերը, զանգվածների (մարմինների) չափերն ու ձևերը, կոնտակտների բնույթը:

Մարմինների չափերը վերցվում են քարտեզից, ձևերի մասին դատում են ներփակող ապարներում կոնտակտային պսակների չափերից, մարմինների անմիջական ելքերով կամ տեսատուրային (կազմվածք) հատկանիշների վերլուծության հիման վրա: Չուզահեռ տրվում է դրանց հասակի կառուցվածքա - երկրաբանական հիմնավորումը:

Բաժնի ծավալը՝ 2 – 4 էջ:

#### **Գլուխ IV. Տեկսոնիկա**

Տվյալ բաժնի գլխավոր խնդիրն է շրջանի տեկտոնիկայի նկարագրությունն ու կառուցվածքային առանձնահատկությունների բացահայտումը: Անհրաժեշտ է առանձնացնել նստվածքային ու հրային ապարների ֆորմացիաները, ցույց տալ նրանց կապը շրջանի կառուցվածքի հետ: Այս բաժննը կազմվում է ուսանողի կազմած տեկտոնական քարտեզի ու կտրվածքների հիման վրա: Բացի այդ, օգտագործվում են ֆորմացիոն սյունակն ու առանձին (մասնավոր) կտրվածքները:

Ազգրում անհրաժեշտ է նշել, թե որ տեկտոնական մարզին է պատկանում ուսումնասիրվող տարածքը: Օրինակ, տեկտոնական առումով ուսումնասիրված տարածքը կազմում է ալպյան (կամ հերցինյան, կաբերնյան և այլն) ծալքավոր մարզի մասը:

Այնուհետև անհրաժեշտ է տալ ուսումնասիրված շրջանի կառուցվածքի ընդհանուր տեկտոնական բնութագիրն ու անցկացնել տարածքի տեկտոնական շրջանացում: Ելնելով տեկտոնական քարտեզից՝ թվարկել առանձնացված տեկտոնական շրջանները, և դրանց համապատասխան

համառոտ քննութագրել առանձին գոտիների ու տեղամասերի կառուցվածքներն ու նրանց փոխհարաբերությունը:

Յուրաքանչյուր տեկտոնական (կառուցվածքաֆորմացիոն) գոտու (կամ տեղամասի) նկարագրության սկզբում քննարկվում է նրա մեջ տարածված ֆորմացիաների հաջորդականությունը և տրվում նրանց համառոտ քննութագիրը: Ֆորմացիաները քննարկելիս անհրաժեշտ է առանձնացնել այն հատկանիշները, որոնց վրա հետազայտմ կհենվեն դրանց առաջացնան պատմատեկտոնական պայմանների վերաբերյալ եզրակացությունները:

Օրինակ, առանձնացնելով սպիլիտային ֆորմացիան՝ անհրաժեշտ է ընդգծել նրա ծովային ծագումը քննորոշող հատկանիշները (կայծքարային ապարների ու կրաքարերի շերտերի առկայությունը), նշել էֆուզիվների ապարագրական կազմի խայտարդեսությունը, ստվարաշերտի մեծ հզորությունը: Պարտադիր պետք է նշել ֆորմացիայի հասակը: Առանձնացված յուրաքանչյուր ֆորմացիային կարող է համապատասխանել մեկ կամ մի քանի շերտագրական ստորաբաժին:

Անհրաժեշտ է վերլուծել քարտեզի տարածքում ֆորմացիաների տարածվածության կապը խոշոր կառուցվածքների հետ և եզրակացություններ անել վերջիններիս քննույթի վերաբերյալ:

Երջանի տեկտոնիկայի նկարագրման ընթացքում պետք է նշել գերակշռող նստվածքների հասակը և տեղադրման ձևերը, որոշել տեղամասերի (գոտիների) հարաբերությունները միմյանց նկատմամբ և նկարագրել նրանց միջև սահմանների դիրքն ու քննույթը: Սահմանները կարող են լինել այս կամ այն չափով պայմանական՝ անցնել որևէ խոշոր խզվածքով, որևէ շերտի տարբեր տեղադրման ձևերով տեղամասերը բաժանող գծով և այլն: Այդ նկարագրության վերջում պարտադիր պետք է տրվի քարտեզի տարածքի կառուցվածքի ընդհանուր քննութագիրը:

Հետագա նկարագրությունը պետք է անցկացնել յուրաքանչյուր առանձնացված տեկտոնական գոտինվ (տեղամասով): Վերլուծելով աններդաշնակությունների ու ֆորմացիաների քննույթը, անհրաժեշտ է առանձնացնել կառուցվածքային համալիրներն ու հարկերը, իսկ հնարավորության դեպքում՝ ենթահարկերը: Համալիրներն անվանվում են ըստ երկրաբանատեկտոնական դարակարգերի՝ բայկալյան, կալեղոնյան և այլն (Հավելված 3): Կառուցվածքային հարկերն անվանվում են դարակարգերի մասերով՝ ըստ ժամանակի: Օրինակ, ուշ հերցինյան հարկ, վաղ կալեղոնյան հարկ և այլն: Ենթահարկերը նշվում են որպես ստորին, միջին, վերին:

Տվյալ բաժնի կարևոր խնդիրներից է աններդաշնակությունների մասնամասն բնութագրումն ըստ նրանց տեսակի և հասակային ծավալի, տարածական դիրքի և աններդաշնակության մակերեսի կառուցվածքի:

Տեկտոնական գոտու (կամ տեղամասի) կառուցվածքի նկարագրությունը կատարվում է ներքեւից վերև՝ յուրաքանչյուր հարկն առանձին և կառուցվում է ընդհանուրից - մասնավորին սկզբունքով (խոշոր կառույցներից դեպի փոքրերը): Օրինակ, անտիկլինորիումներից ու սինկլինորիումներից դեպի բարդացնող խախտումները և այլն:

Ծալքերի նկարագրությունը պետք է սկսել նրանց տարածական (աշխարհագրական) դիրքից: Պետք է ուշադրություն դարձնել մորֆոլոգիական (ձևաբանական) առանձնահատկությունների բնութագրման վրա. Աշել ծալքերի առանցքների տարածումը, պլանում ծալքերի տեսակը (գծային, բրախիձև, գմբերածև), միջուկը և թևերը կազմող ապարների հասակը, թերեւ տվյալներ ծալքերի երկարության, լայնության և ամպլիտուդի (բարձրության) մասին, նկարագրել շարնիրի վարքը: Այնուհետև տրվում է ծալքերի բնութագիրը լայնակի հատումներում՝ ըստ ծալքերի սեղմվածության աստիճանի, թևերի փոխհարաբերության ու թերության աստիճանի, առանցքային մակերեսի դիրքի ու փականի ձևի: Նշվում են թևերի անկման անկյունները, ծալքերի շրջնան աստիճանն ու ուղղությունը: Ամենախոշոր ծալքերը նկարագրվում են առանձին, փոքրերի համար տրվում է ընդհանուր նկարագրություն: Եթե նկատվում է ծալքերի փնջավորում (ցրում), ապա պետք է դրանք բնութագրել՝ կցելով քարտեզից անհրաժեշտ պատճենները: Բացահայտվում են ծալքերի տիպերն ըստ շերտերի հզորությունների փոխհարաբերության փականներում և թևերում:

Հավելված 9-ի 7-12 նկարներում պլանում և լայնակի հատումներում բերվում են ծալքերի ձևաբանական դասակարգման օրինակներ: Հավելված 6-ում տրվում են երկրաբանական քարտեզների վրա կառուցվածքային տարրերի (խզվածքներ, ծալքեր և այլն) պատկերման պայմանական նշանները:

Խզվածքները, որոնք բարդացնում են ծալքերը, բնութագրվում են պլիկատիվ (ծալքավոր) ձևերի նկարագրման ընթացքում: Խոշոր ուղղունալ (տարածաշրջանային) խզվածքները, ինչպես նաև խզվածքների համակարգերը, որոնք կապված չեն ծալքերի հետ, անհրաժեշտ է նկարագրել առանձին: Առանձնահատուկ պետք է անշատել խորքային բեկվածքները: Նրանց գիշավոր հատկանիշներից են գերիմբքային ապարների առկայությունը, կտրվածքի տարրեր կառուցվածքը, երբեմն խորքային բեկված-

քի երկու կողմերում ծալքավորության տարբեր հասակը: Խզվածքներն՝ ըստ տարածման ու հասակի ստորաբաժանվում են համակարգերի:

Խզվածքների նկարագրության ժամանակ նշվում է նրանց տեղադրությունը, տիպը, թևերը կազմող ապարների հասակը, նետիչի մակերեսի դիրքը, թևերի հարաբերական դիրքը, խզվածքի ամպլիտուդն ու հասակը: Կողաշարժերի նկարագրության ժամանակ անհրաժեշտ է առանձնահատուկ կանգ առնել դրանց առկայության և տեղաշարժման ուղղության հիմնավորման վրա: Բնութագրելով շարժաժները՝ անհրաժեշտ է առանձին նկարագրել ալիքոնի և ավտոխրոնի կառուցվածքը, կանգ առնել տեկտոնական ծածկոցի մնացորդների ու պատուհանների վրա, եզրակացություններ անել խզման մակերեսի (նետիչի) ձևի ու դիրքի մասին, նշել հորիզոնական վերածածկման մեծությունը և առաջացման ժամանակը:

Ինտրուզիվ մարմինների տեկտոնիկայի նկարագրությունն առաջարկվում է սկսել ներփակող կառուցվածքների հետ կապի բնութագրումից (մարմինների կապը խզվածքների, ծալքերի, շերտավորության մակերեսների հետ), որի հիմն վրա էլ կարելի է եզրակացնել ընդհանուր ծալքավոր կամ շերտավոր կառուցվածքներում մարմնի դիրքի մասին: Այնուհետև տրվում է ինտրուզիվ զանգվածների ու շրջանի տեկտոնական ձևավորման հիմնական փուլերի փոխհարաբերությունների նկարագրությունը:

Բաժնի ծավալը պետք է կազմի 5 – 7 էջ:

«Տեկտոնիկա» բաժնին կցվում են ֆորմացիոն սյունակը, քարտեզի մասշտարով տեկտոնական քարտեզը, երկրաբանական կտրվածքները և, անհրաժեշտության դեպքում, ուսումնասիրվող շրջանի առանձին տեղամասերի սխեմատիկ շերտագրական սյունակները:

Ֆորմացիոն սյունակը կազմվում է շերտագրական սյունակի ու քարտեզի վերլուծության հիմնան վրա:

Ցուրաքանչյուր կառուցվածքաֆորմացիոն մարզի (կամ գոտու) համար կառուցվում է առանձին սյունակ և բոլորը ներկայացվում են մեկ վերնագրով, ընդհանուր թերթի վրա:

Ցուրաքանչյուր կառուցվածքային համալիրի և հարկի համար ֆորմացիոն սյունակում ցույց են տրվում տեկտոնական ուժիմները՝ մինչգետինկիլինալային, գեռսինկլինալային, օրոգեն էպիգեռսինկլինալային, պլատֆորմային, օրոգեն էպիպլատֆորմային և այլն:

Տեկտոնական քարտեզի վրա ցույց է տրվում առանձնացված տեկտոնական շրջանների դիրքը: Պայմանական նշաններում բերվում է

նրանց համառոտ բնութագիրը, առանձնացվում են սահմանները, նշվում է նրանց տիպը:

Երջանների ներսում առանձնացվում են կառուցվածքային հարկերը (գույնով, հազվադեպ ստվերագծերով): Ինտրուզիվ մարմինները նշվում են բժանշաններով՝ կազմին համապատասխան երանգով: Բժանշանի ձևը պետք է համապատասխանի ինտրուզիվ ապարների կազմին: Ենթահարկերն առանձնացվում են երանգներով: Ծալքավոր ձևախսատումներն ու խզվածքները նշվում են տարրեր տեսակի կառուցվածքային գծերով. գծային ծալքերն՝ առանցքային գծերով, բրախիծալքերն ու մուլդաները՝ իզոմետրիկ ուրվագծերով: Միաբեր կառուցվածքներն, այդ թվում ֆլեքսուրաներն, արտահայտվում են ստրատիկոհիպսերի միջոցով:

Տեկտոնական քարտեզների կառուցման ընթացքում անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել լեգենդին՝ պայմանական նշանների բացատրմանը: Հավելված 3-ում բերված են տեկտոնական քարտեզի պայմանական նշանների օրինակները: Լեգենդում, բացի պայմանական նշաններից, պետք է բերվի նաև ֆորմացիաների բնութագիրը:

#### Գլուխ V. Օգտակար հանածոներ

Տվյալ բաժնում նկարագրվում են շրջանում տարածված օգտակար հանածոները և նրանց հայտնաբերման հեռանկարները: Սովորաբար ուսումնական քարտեզներում բերված են ոչ մետաղական օգտակար հանածոները (ածուխ, քարաղ, գիշու և այլն): Լիբուլզիական կազմի վերլուծությունը բույլ է տախի բացահայտել նաև այլ ոչ մետաղական օգտակար հանածոներ՝ դոլոմիտ, կրաքար, շինանյութեր (ավագ, կավ), երեսպատման քարեր (մարմար, դեկորատիվ բրեկչիաներ, ինտրուզիվ ապարներ՝ գրանիտ, գաբրո և այլն): Մրանք կարող են կիրառվել տնտեսության տարրեր ոլորտներում՝ քիմիական արդյունաբերության, շինարարության, սննդի արտադրությունում, էներգետիկայում և այլուր:

Կառուցվածքային վերլուծության հիման վրա կարելի է բացահայտել նավի ու գազի կուտակման հեռանկարային գմբեթներ և կամարային քարձրացումներ:

Եթե ուսումնասիրվող շրջանում լայնորեն տարածված են ինտրուզիվ ապարները և նրանց կոնտակտային մետասումատիտներն ու հիդրոքերմալ փոփոխակած այլ առաջացումները, ապա մեծ են հեռանկարները քազմաթիվ մետաղական օգտակար հանածոների հայտնաբերման համար (ոսկի, պլատին, երկար, բազմամետաղներ, քրոմիտ և այլն): Երկրաբանական,

ապարագրական, տեկտոնական և օգտակար հանածոների հայտնաբերման այլ նախադրյալների վերլուծության հիման վրա կարելի է առանձնացնել հեռանկարային տեղամասեր հետագա երկրաբանադրոնողական աշխատանքների նախատեսման նպատակով:

Ուսանողները պետք է երկրաբանական քարտեզի վրա հատուկ պայմանական նշաններով ցույց տան շրջանում տարածված օգտակար հանածոների տեսակները, նրանց տեղադրությունը, առանձնացնեն հեռանկարային տեղամասերը:

Հավելված 7-ում բերված են օգտակար հանածոների կուտակումների (հանքավայրերի և հանքաերևակումների) պայմանական նշանները:

Բաժնի ծավալը՝ 2 – 3 էջ:

#### **Գլուխ VI. Շրջանի երկրաբանական զարգացման պատմությունը**

Տվյալ բաժնում պատմական հաջորդականությամբ բերվում է երկրաբանական իրադարձությունների նկարագրությունը: Որպես հիմք վերցնում են երկրակեղեի տեկտոնական շարժումները: Գլխավոր խնդիրն է տարածքի տեկտոնական զարգացման պատմության նկարագրությունը: Պալեոաշխարհագրությունն ու նստվածքակուտակման պայմանները նկարագրվում են տեկտոնական զարգացմանը համապատասխան: Առանձնացվում են տրանսգրեսիվանների ու ռեգրեսիվանների խոշոր դարակարգերը: Երկրաբանական զարգացման հնագույն պատմության վերականգնման նյութ են հանդիսանում կառուցվածքային առանձնահատկությունները, նստվածքակուտակման, հրային գործունեության, աններդաշնակությունների բնույթը, որոնք ստացվում են քարտեզի ու երկրաբանական կտրվածքների վերլուծությունից:

Առանձնացվում են տարածքի տեկտոնական զարգացման փուլերն ու ստադիանները, տեկտոնական կառուցների ձևավորման ժամանակն ու հաջորդականությունը, մագմատիզմի և հրաբխային գործունեության կապը կառուցվածքային զարգացման հետ:

Ցանկալի է ենթադրություններ կատարել ծալքերի ու խզվածքների առաջացման մեխանիզմների վերաբերյալ, առանձնացնել կրնենիմենատացիոն կառուցները, մատնանշել ինտրուզիվ և էֆուզիվ ապարների փոխհարաբերությունները:

Այս բաժնում անհրաժեշտ է նշել առավել վառ արտահայտված ծալքավորության դարակարգերը, խոշոր խզվածքների ու հրաբխային գործունեության սկզբնավորման ժամանակը:

Բաժնի վերջում հանձնարարվում է անել համառոտ եզրակացություն՝ ներ ծալքավորության հիմնական դարակարգի և խոշոր ինտրուզիվ զանգվածների կազմավորման ժամանակի մասին, որոշել երկրաբանական է-վոլյուցիայի ընդհանուր ուղղվածությունը:

Բաժնի ծավալը՝ 5 – 6 էջ:

### **Վերջաբան**

Աշխատանքի ավարտին կատարվում են եզրակացություններ ուսումնասիրվող շրջանի տնտեսաաշխարհագրական ակնարկի, երկրաբանական կառուցվածքի բարդության, շերտագրության, հրայնության (մազմատիզմի), տեկտոնիկայի, օգտակար հանածոների և երկրաբանական զարգացման պատմության վերաբերյալ:

Վերջաբանի ծավալը 1 – 2 էջ:

### **Գրականություն**

Տրվում է աշխատանքում և նրա կատարման ընթացքում օգտագործված գրականության ցանկը, ինչպես տպագիր, այնպես և ֆոնդային հաշվետվությունները և այլն: Գրականության ցանկը բերվում է ըստ այբբենական կարգի, իսկ աշխատանքում տրվում են նրանց վրա հղումներ՝ քառակուսի փակագծերում նշելով նրանց հերթական համարը, օրինակ՝ [1], [3-5], [2,4]:

### **Տեքստային և գծագրական հավելվածներ**

Լուսաբանող նկարներ՝ կուրսային աշխատանքի բնութագիրն ուղեկցվում է շերտագրական սյունակներով, քարտեզից առանձին պատճեններով, մասն կտրվածքներով: Նկարները համարակալվում են և ունենում բացատրական նակագրություններ:

**Գծագրական հավելվածները** ձևավորվում են առանձին թերթերի վրա՝

Հավելված 1 - Երկրաբանական քարտեզի պատճենն,

Հավելված 2 - Երկրաբանական կտրվածքներ (2 – 3 հատ),

Հավելված 3 - Տեկտոնական քարտեզ (երկրաբանական քարտեզի մասշտաբով):

Նույն թերթի վրա աշխատանքի դեկավարի ցուցումով կազմվում է բլոկ-դիագրամ:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԱՐԱՆ



ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ  
ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ  
ՈՐՈՆՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ԱՄԲԻՈՆ

## ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

«Կառուցվածքային երկրաբանություն և  
երկրաբանական քարտեզագրություն» առարկայից

ԹԵՍԱ՝ Քարտեզ M-58-III (1:50000): Շրջանի երկրաբանական  
կառուցվածքը և օգտակար հանածոները

Ամբիոնի վարիչ՝

Ա.Հ. Ազգանուն

Դեկան՝

Ա.Հ. Ազգանուն

Կազմեց III կուրսի ուսանող՝

Ա.Հ. Ազգանուն

## ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

### 1. Ծերտերի հորիզոնական տեղադրման պայմաններում

Ծերտերի հորիզոնական տեղադրման դեպքում կտրվածքի գծի առավել նախատակահարմար ուղղությունն այն գիծն է, որն անցնում է տարածքի ռելիեֆի ամենաբարձր և ամենացածր կետերով։ Այդ դեպքում երկրաբանական կտրվածքը կընդգրկի շերտագրական կտրվածքի բոլոր միավորները։ Կտրվածքի ճգվածությունը Երկրի մակերևույթից դեպի ներքև որոշվում է կոնկրետ՝ մակերեսում չմերկացող ապարների հզորության (հաստության) և տեղադրման, տվյալներով։ Սրանց համար հիմնական աղյուր են ծառայում հորատման և երկրաֆիզիկական աշխատանքների նյութերը։

Քարտեզի վրա կարելի է անցկացնել մեկ կամ մի քանի կտրվածքի գիծ։ Հորիզոնական մասշտաբը պետք է համապատասխանի քարտեզի մասշտաբին։ Ուղղաձիգ մասշտաբը կախված է կտրվածքի վրա պատկերվող շերտերի կամ շերտագրական հորիզոնների հզորություններից։ Գերադասելի է, որ ուղղաձիգ մասշտաբը համապատասխանի հորիզոնականին։ Սակայն քարտեզի փոքր մասշտաբի և շերտերի ոչ մեծ հզորությունների դեպքում այս պայմանն իրագործելի չէ։ Այս դեպքերում, ուղղաձիգ մասշտաբի ընտրման ժամանակ, անհրաժեշտ է, որ կտրվածքի վրա պատկերվող ամենափոքր հզորության շերտը կամ շերտագրական հորիզոնն ունենա ոչ պակաս, քան 1 մմ լայնություն։

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել կտրվածքների ճիշտ ձևավորմանը։ Կտրվածքի գծի սկզբում և վերջում դրվում են տառեր։ Առաջին տառը դրվում է գծի այն ծայրում, որը գտնվում է քարտեզի հարավային (ՀՎ), հարավ-արևմտյան (ՀՎ-Արմ), արևմտյան (Արմ) և հյուսիս-արևմտյան (Հս-Արմ), իսկ երկրորդը՝ հյուսիսային (Հս), հյուսիս-արևելյան (Հս-Արլ), արևելյան (Արլ) ու հարավ-արևելյան (ՀՎ-Արլ) եզրերում։ Կտրվածքների եզրերում նշվում է գրաֆիկական ուղղաձիգ մասշտաբը, իսկ վերևում գրվում են նրանց անվանումը, հորիզոնական և ուղղաձիգ մասշտաբների թվային արժեքները։ Կտրվածքների վրա նշվում են պատկերվող ապարներին համապատասխանող ինդեքսները։

## **2. Չերտերի թեք տեղադրման պայմաններում**

Երկրաբանական կտրվածքներում թեք տեղադրված շերտերի պատկերման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել կտրվածքի գծի կողմնորոշումը շերտերի անկման և տարածման գծերի նկատմամբ, կտրվածքի հորիզոնական և ուղղաձիգ մասշտարների փոխհարաբերությունները, շերտերի անկման անկյունները, հզորությունները և ռելիեֆի ձևը:

Տեղադրման էլեմենտների (շերտերի անկման գիծ, տարածման գիծ) նկատմամբ կտրվածքի գծի կողմնորոշման նշանակությունը չափազանց կարևոր է: Եթե կտրվածքի գիծն ուղղվի անկման գծով (կամ տարածման գծին խաչաձև), ապա նման կտրվածքներում շերտերի անկման անկյուններն ու հզորությունները կիխնեն իրական: Այս կտրվածքներում, որոնց ուղղությունը համընկնում է տարածման գծի ուղղության հետ, շերտերը կունենան հորիզոնական դիրք: Տարածման գծի նկատմամբ կտրվածքի գծի շեղ կողմնորոշման դեպքում շերտերի թեքության անկյունը կտրվածքի վրա կունենա միջանկյալ արժեք՝  $0^{\circ}$ -ից մինչև իրական անկման անկյունը, իսկ շերտերի հզորությունը կիխնի իրականից մեծ: Շեղ կտրվածքներում շերտերի թեքության անկյունների ճիշտ արժեքները ստանալու համար օգտվում են հասուկ աղյուսակներից կամ նոմոգրամներից (Հավելված 10):

Թեք տեղադրված շերտերի պատկերման ժամանակ կտրվածքների ուղղաձիգ մասշտարը պետք է հավասար լինի հորիզոնական մասշտարին: Այդպիսի կտրվածքներում շերտերի թեքության անկյունները կիամապատասխաննեն իրականում դիտարկվող արժեքներին: Սակայն հնարավոր են այնպիսի պայմաններ, երբ ստիպված ենք լինում ուղղաձիգ մասշտարը մեծացնել: Հորիզոնականի նկատմամբ նրա մեծացման դեպքում շերտերի թեքության անկյունները մեծանում են և դառնում իրականից մեծ, իսկ կտրվածքների վրա շերտերի դիրքի պատկերը կտարբերվի իրականից: Սա էլ ստիպում է երկրաբաններին հնարավորության սահմաններում խուսափել ուղղաձիգ մասշտարի մեծացումից և կառուցել կտրվածքները 1:1 հարաբերությանը:

Եթե մեծացված մասշտարով կտրվածքը կառուցվում է տարածման գծի նկատմամբ շեղ ուղղությամբ, ապա սկզբում որոշվում է շեղ կտրվածքի համար անկյունը (հասուկ աղյուսակների կամ նոմոգրամների միջոցով, տե՛ս Հավելված 10), հետո ստացված արժեքը վերահաշվարկվում է, հա-

մասպատասխանաբար, հորիզոնական և ուղղաձիգ մասշտաբների փոխարարերությանը:

Ուկիեֆը, նույնպես, մեծացված մասշտաբով կտրվածքներում կունենա շեղված պատկեր: Բարձրությունների նիշերի միջև հեռավորություններն անց են կացվում արդեն մեծացված ուղղաձիգ մասշտաբով: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նման կտրվածքների վրա շերտերի իրական հզորություններն ու անկյան անկյունները կլինեն շեղված:

### 3. Ծալքավոր կառուցվածքի պայմաններում

Ծալքավոր կառուցվածքներով երկրաբանական կտրվածքները պետք է կառուցել այնպես, որ նրանք կողմնորոշված լինեն ծալքերի առանցքների տարածմանն ուղղահայաց: Եթե կտրվածքի ու ծալքառաջացնող շերտերի տարածման գծերը կազմում են որոշ անկյուն, ապա նրանց թեքության անկյան արժեքներում կատարվում են համապատասխան ուղղումներ: Կտրվածքի ուղղաձիգ մասշտաբը պետք է համապատասխանի հորիզոնականին: Եթե այն ինչ-ինչ պատճառներով մեծացվում է, ապա թեքության անկյունների արժեքներում պետք է նայվեն ուղղումներ:

Ընտրելով կտրվածքի գիծը՝ կառուցում են ուկիեֆի պրոֆիլը, որի վրա նշում են ծալքերի առանցքների դիրքն ու քարտեզի վրա երկրաբանական սահմանների կտրվածքի հետ հատման կետերը: Ապա կտրվածքի վրա նշում են ապարների անկյան անկյունները, որոնցով կառուցում են ծալքերի թևերը: Ծալքերի փականների պատկերման ժամանակ պետք է ուշադրություն դարձնել կամարների ձևի ու ապարների հզորության վրա: Կտրվածքների վրա հիմնականում պատկերվում են համակենտրոն ծալքեր, քանի որ շերտերի հզորությունների բնական փոփոխությունները կամարներում և թևերում մի քանի հազար անգամ նվազեցնելու դեպքում չեն արտահայտվում:

Անհրաժեշտ է ուշադիր հետևել, որպեսզի կտրվածքներում հզորությունների փոփոխությունները տեղի չունենան ի հաշիվ մակերեսում նշված շերտերի թեքության անկյունների սխալ շարունակմանը խորքում:

Կտրվածքներում ծալքերի կամարների անցկացման ժամանակ անհրաժեշտ է կողմնորոշվել քարտեզի վրա պատկերված նրանց ձևերով, որոնք այս կամ այն աստիճանով կրկնվում են կտրվածքում (նկ. 9): Պլա-

նում սուր փականները կտրվածքում պատկերվում են սուր, իսկ սահուն փականները՝ սահուն տեսքով:

Անրավարար շերտագրական մասնատվածություն ունեցող քարտեզներով կտրվածքների կառուցման ժամանակ անհրաժեշտ է գորոշ լինել, քանի որ այսպիսի դեպքերում մեծ նշանակություն է ձեռք բերում առանցքային մակերեսների պատկերումը: Օրինակ, նկար 10-ում Գ-Դ գծով տարված կտրվածքներից մեկում առանցքային մակերեսները հաշվի չեն առնըված, բայց պահպանված են ապարների թեքության անկյունները (կտրվածք Գ<sup>I</sup>-Դ<sup>I</sup>): Ըստ որում, ապարների հզորությունները ստացվել են շեղված: Գ<sup>II</sup>-Դ<sup>II</sup> կտրվածքում առանցքային մակերեսների դիրքը նույնպես հաշվի չի առնված, պահպանված են հզորությունները, բայց շեղված են թեքության անկայունները:

Միայն ծալքերի առանցքային մակերեսների դիրքը հաշվի առնելու դեպքում (կտրվածք Գ-Դ - երրորդ տարրերակ) հնարավոր է հասնել կտրվածքների վրա ծալքերի ճիշտ պատկերմանը (նկ. 10): Մնացած բոլոր կտրվածքները կառուցված են ծալքերի առանցքային մակերեսների դիրքը հաշվի առնելով:

Մեծ բարդություններ են առաջանում միատարր ծալքավոր ստվարաշերտերի կտրվածքների կառուցման ժամանակ, երբ բացակայում են լայն տարածում ունեցող շերտագրական կամ լիթոլոգիական հորիզոնները: Հատկապես նման հատկություններ ունեն բարդ ծալքավորված ֆիշային և թերքաքարային ստվարաշերտերը: Երկրաբանական քարտեզների վրա, նման դեպքերում, նշվում են միայն խոչշոր շերտագրական միավորների սահմանները, իսկ ծալքերն արտահայտվում են տեղադրման էլեմենտների միջոցով (Հավելված 6):

Նման պայմաններում երկրաբանական կտրվածքի կառուցման ժամանակ առաջին հերթին պետք է որոշել ծալքերի առանցքային գծերի դիրքը: Այս նպատակով միացնում են մեկը մյուսի կողքին գտնվող կետերը, որոնցում չափված են նորմալ և շրջված տեղադրումները, կամ էլ հակառակ ուղղությամբ թեքված շերտերի տեղադրման էլեմենտների կետերը: Չափման կետերի միջև եղած հեռավորությունները բաժանելով երկու մասի ստանում են առանցքային գծի դիրքը (նկ. 11, թ):

Անտիկլինալ ծալքերի առանցքները սինկլինալներից կարելի է տարբերել շերտերի անկման անկյունների տարրերություններով: Որպես կանոն, ծալքերի նորմալ թևերում ապարների թեքության անկյունները լինում են ավելի փոքր, քան շրջված թևերում: Անցկացնելով առանցքային գծերի

դիրքը կտրվածքի վրա, անհրաժեշտ է որոշել առանցքային մակերեսների թեքությունները, որոնց դիրքը կհամապատասխանի ծալքերի թևերով առաջացող անկյունների կիսորդին (բիսեկտորիսային):

Կատարելով բոլոր նախնական կառուցումները, հեշտությամբ կարելի է կառուցել կտրվածքի վրա ծալքերի ամբողջ համայնքը՝ հաշվի առնելով նստվածքների իրական հզորությունները, որոնք նշված են քարտեզներին կցվող շերտագրական այոնակում:

## ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԾԱՆՆԵՐ

### ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻ ՀԱՍՏԻՐՆԵՐ (ՀԱՐԿԵՐ)

ՀՀ	Անվանումը	Ինդեքսը	Պայմանական գույնը	Ընդգրկող ժամանակաշրջանը և հասակը
1	Ալպյան (շմասմատված)	A	դեղին	տրիաս, յուրա, կավիճ, պալեոգեն, նեոգեն, չորրորդական (T, J, K, Ք, N, Q) 0.1 – 210 մլն. տարի
2	Ուշալպյան (օրոգեն, կոլիզիոն)	A <sub>0</sub>	բաց դեղին	օլիգոցեն, նեոգեն, չորրորդական (Ք <sub>3</sub> , N <sub>1</sub> , N <sub>2</sub> , Q)
3	Միջինալպյան	A <sub>2</sub>	վառ դեղին	վերին յուրա, կավիճ, պալեոցեն, էոցեն (J <sub>3</sub> , K, Ք <sub>1</sub> , Ք <sub>2</sub> )
4	Վաղալպյան – Կիմերյան	A <sub>1</sub>	դեղնա - նարնջագույն	տրիաս, ստորին և միջին յուրա (T, J <sub>1</sub> , J <sub>2</sub> )
5	Հերցինյան (Վարիսցիյան)	H (V)	մոխրագույն	դևոն, կարբոն, պերմ (D, C, P) 210 – 400 մլն. տարի
6	Կալերնյան	C	դարչնագույն	թեմբր, օրորվիկ, փիրով, երբեմն ստորին դևոն (C, O, S, ~ D <sub>1</sub> ) 400 – 550 մլն. տարի
7	Բայկալյան	B	մանուշակա- գույն	վերին ոփիեյ, վենդ, երբեմն վաղ թեմբր 550 – 1000 մլն. տարի
8	Գրենվիլյան	GR	կարմրա - նարնջագույն	1000 – 1350 մլն. տարի
9	Գոբյան	GT	վառ փարդագույն	1350 – 1750 մլն. տարի
10	Կարելյան	KR	շագանակա- գույն	1750 – 2000 մլն. տարի
11	Արխեյան	AR	մուգ կարմիր	մինչև 2600 մլն. տարի

## ՀՐԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԵՐ





























Նշվում են սև բծանշանով, գույնը՝ կառուցվածքային համալիրի (հարկի) գույնին համապատասխան: Դայկաները, երակները նշվում են սև գծերով՝ ուղեկցվելով կազմին ու հասակին համապատասխան ինդեքսներով:

Ապարի անվանումը	Ինդեքսը	Ապարի անվանումը	Ինդեքսը	
Հրաբխածին և ենթահրաբխածին ապարներ		Ինտրովիվ ապարներ		
Թթու ապարների խումբ				
Ո-իոլիտներ (Լիպարիտներ)	λ (լամբդա)	Լեյկոգրանիտներ	լγ (Էլ, զամնա)	
Դացիտներ	ζ (ձետա)	Գ-բանիտներ	γ (գամնա)	
Տրախիոլիոլիտներ	τλ (տառ, լամբդա)	Պլազիոգրանիտներ (ցածր ակալային գրանիտ, պլազիոգրանիտ)	րγ (պի, զամնա)	
		Գ-բանովիորիտներ (գրանովիորիտ, տոռնպիտ)	γδ (զամնա, դետա)	
Սիցին կազմի ապարների խումբ				
Անդեգիտներ	α (ալֆա)	Քվարցային դիորիտներ	զδ (քյու, դետա)	
Անդեգիտային բազալտներ	αβ (ալֆա, բետա)	Դիորիտներ	δ (դետա)	
Հիմքային ապարների խումբ				
Բազալտներ (լեյկորազալտ, հիպերստենային բազալտ, բազալտ, օլիվինային բազալտ)	β (բետա)	Անորտովիտներ	η (էտա)	
Պիկրոբազալտներ	ωβ (օմեգա, բետա)	Գ-արբորիդներ (նորիտ, գարբոնորիտ, գարբոն, օլիվինային գարբոնորիտ, նորիտ, գարբոն, տրոկտոլիտ)	ν (նյու)	
		Պիրոքսենիտներ, հոռնբլենդիտներ	ս (իպսիլոն)	

*Հավելված 4, աղյուսակի շարունակությունը*

Գերիշմքային ապարների խումբ			
Պիկրիտներ (պերիդոտիտային կոմատիտ, պիկրիտ)	ω (օմեգա) ι (իոտա)	Պերիդոտիտներ, հարցրուրգիտներ	υσ (իպսիլոն, սիզմա)
		Դունիտներ (դունիտ, օլիվինիտ), սերպենտինիտներ	σ (սիզմա)
Ալկալային ապարների խումբ			
Տրախիտներ	τ (տառι)	Սիենիտներ	ξ (քսի)
Ֆոնոլիտներ	φ (ֆի)	Մոնցոնիտներ	μ (մյու)

ԱՊԱՐՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԽԾԱՆՆԵՐ (ԲԺԱՆԾԱՆՆԵՐ)

- |    |   |    |   |    |   |    |   |
|----|---|----|---|----|---|----|---|
| 1  |    | 2  |    | 3  |    | 4  |    |
| 5  |    | 6  |    | 7  |    | 8  |    |
| 9  |    | 10 |    | 11 |    | 12 |    |
| 13 |    | 14 |    | 15 |    | 16 |    |
| 17 |    | 18 |    | 19 |    | 20 |    |
| 21 |   | 22 |   | 23 |   | 24 |   |
| 25 |  | 26 |  | 27 |  | 28 |  |
| 29 |  | 30 |  | 31 |  | 32 |  |
| 33 |  | 34 |  | 35 |  | 36 |  |

## ՆԱՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐ

**Բեկորային և կավային ցեմենտացված ապարներ.**

1. Ավագաքարեր, 2. Ակրոլիտներ, 3. Արգիլիտներ:

**Կարրոնատային ապարներ.**

4. Կրաքարեր, 5. Դոլոմիտներ, 6. Կրային մերգելներ, 7. Դոլոմիտային մերգել, 8. Օրգանական կրաքարեր:

## ՀՐԱԲԽԱԾԻՆ ԱՊԱՐՆԵՐ

**Թթու ապարների խումբ.**

9. Ոխոլիտներ (լիպարիտներ), 10. Ոխոդացիտներ, 11. Պլազի-ռիոլացիտներ, 12. Դացիտներ:

**Միջին կազմի ապարների խումբ.**

13. Անդեզիտներ, 14. Անդեզիտային բազալտներ:

**Հիմքային ապարների խումբ.**

15. Բազալտներ, 16. Պիկրոբազալտներ:

**Այլ.** 17. Դացիտային կազմի պսամիտային տեֆրա (հրաբխային ավազ),

18. Ոխոլիտային կազմի պսեֆիտային տոռֆ, 19. Տոռֆավազաքարաբ:

## ԻՆՏՐՈՖԶԻՎ ԱՊԱՐՆԵՐ

**Թթու ապարների խումբ.**

20. Լեյկոգրանիտներ, 21. Գրանիտներ, 22. Պլազիոգրանիտներ, 23.

Գրանոտիորիտներ:

**Միջին կազմի ապարների խումբ.**

24. Ջվարցային դիորիտներ, 25. Դիորիտներ, 26. Սոնցոնիտներ, 27.

Սիենիտներ, 28. Ակվալային սիենիտներ:

**Հիմքային ապարների խումբ.**

29. Գաբրոիդներ, 30. Պիրոքսենիտներ, հոռնբլենդիտներ:

**Գերմինիքային ապարների խումբ.**


31. Պերիորտիտներ, 32. Դումիտներ:

**Պորֆիրային ապարներ.**

33. Գրանիտ-պորֆիր, 34. Գաբրո-պորֆիրիտ, 35. Դիորիտային

պորֆիրիտ, 36. Սոնցոնիտ-պորֆիրիտ:

**ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԻ ՆՇԱՆՆԵՐ**



1. գլխավոր բեկվածքներ. ա) ստույգ, բ) ենթադրվող
2. երկրորդական բեկվածքներ. ա) ստույգ, բ) ենթադրվող
3. խորքային բեկվածքներ
4. վարնետքներ (գծիկներն ուղղված են իջեցված (պառկած) թևի ուղղությամբ)
5. վերնետքներ (գծիկներն ուղղված են բարձացած (կախված) թևի ուղղությամբ)
6. վրաշարժեր
7. տեկտոնական ծածկոցներ (շարյաժներ)
8. կողաշարժեր
9. հեռաշարժեր
10. ֆլեքսուրաներ
11. անտիկլինալ ծալքերի առանցքներ

12. սինկլինալ ծալքերի առանցքներ
13. շրջված ծալքերի առանցքներ. ա) սինկլինալ, բ) անտիկլինալ
14. մոնոկլինալներ (միաթերվածքներ)
15. իջվածքներ
16. բարձրացումներ
17. գործող (ա) և պալեոհրաբուխներ
18. աղային զմբեթներ (դիավիրներ)
19. կառուցվածքային միավորների (համալիրներ, հարկեր, ենթահարկեր) միջև սահմաններ
20. այլ սահմաններ

**ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐԻ (ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ  
ԵՎ ՀԱՆՔԵՐԵՎԱԿՈՒՄՆԵՐԻ) ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**

**1. ԱՅՐՎՈՂ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ**

	նավթ		տորֆ - դեղին
	գազ		այրվող թերթաքարեր
	նավթ ու գազ		ածուխ
	բիտում		

**2. ՄԵՏԱՂԱԿԱՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ**

Տրվում են շրջանագծով , տվյալ մետաղին (մետաղներին) բնորոշ գունավորմամբ (մի քանի մետաղների առկայության դեպքում գլխավոր բաղադրիչներին համապատասխան գույներով շրջանագիծը բաժանվում է հավասար մասերի ):

Fe - երկար (մուգ մանուշակագույն)

Mn - մանգան (վարդամանուշակագույն)

Cr - քրոմ (թանաքագույն)

Cu - պղինձ (կանաչ)

Ti - տիտան (մուգ վարդագույն)

Ni - նիկել (դեղնականաչավուն)

Co - կորալ (խակի, ծխախոտագույն, կանաչ-շագանակագույն)

Pb - կապար (կապույտ)

Zn - ցինկ (բաց կապույտ)

Sn - անագ (նարնջագույն)

As - մկնդեղ (բաց դեղնավուն)

Sb - ծարիր (շոկոլադագույն, սրճագույն)

Al - ալյումինում (վառ դեղին)

Mo - մոլիբդեն (կարմիր)

W - Վոլֆրամ (մորու գույն)

Hg - սնդիկ (կարմրաշագանակագույն)

Ag - արծաթ (դեղնագազարավուն)

Au - ոսկի (դեղին, ոսկեգույն)

Pt - պլատին (դեղնադարչնագույն)

### 3. ԿԱՐԾՔ ՈՉ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ

Բնական նյութեր

#### Միմերալներ



ալմաստ – նարնջագույն



գունագեղ՝ թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր (զմրուխտ, տոպազ, բերիլ, ամետիստ, նոնաքար և այլն) – մանուշակագույն



օպտիկական և պիեզոնյութեր (հսլանդական սպաթ, լեռնային բյուրեղապակի, տորմալին, ֆլյուորիտ և այլն) – կանաչ



փայլարներ (մուսկովիտ, ֆլորոպահիտ, բիոտիտ և այլն) – դեղնագազարագույն



այլ տեխնիկական նյութեր (գրաֆիտ, ասբեստ և այլն) – կապույտ

#### Հեռնային ապարներ




շինանյութեր (հատ քար, ավազ, խիճ, կավ, երեսպատման սալիկ և այլն), կիսաթանկարժեք քարեր (քվարցիտ, մարմար, հասպիս և այլն), կրաքար, տրավերտին, քարաղ, գիպս, անիդրիտ, տուֆ, անդեզիտ, բազալտ և այլն

**ՄԻՆԵՐԱԼՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԱԳՐԵԳԱՏՆԵՐԻ ՏԱՌԱՅԻՆ  
ՆԾԱՆՆԵՐ**


az ազուրիտ	sa սանիդին
ar արսենապիրիտ	src սերիցիտ
bo բորնիտ	srp սերպենտին
wo վղասառնիտ	sr սիղերիտ
w վղլֆրամիտ	spl սփալերիտ
gn գալենիտ	td տետրադիմիտ
hm հեմատիտ	phl ֆլոգոպիտ
q քվարց	fl ֆլյուորիտ
cv կովելին	chc խալկոզին
cp կուպրիտ	chp խալկոպիրիտ
la լազուրիտ	cl քլորիտ
mg մագնեզիտ	cr քրոմիտ
mt մագնետիտ	zr ցիրկոն
ma մալախիտ	ep էպիլոտ
ms մարկազիտ	
mo մոլիբդենիտ	<i>Բնածիմ տարրերի միմերակներ</i>
mu մուսկովիտ	
ne նեֆելին	bi բիսմուտ
nk նիկելին	au ոսկի
op օպալ	cu պղինձ
py պիրիտ	as մկնեղեղ
ps պիրույուզիտ	pt պլատին
ro պիրոպ	hg սնդիկ
rug պիրոտիտ	s ծծումբ
hbl ամֆիբոլ (հոռնիլենիդ)	ag արծաթ
ro ռոդիխրոզիտ	sb ծարիք

## ՍԽԵՄԱՏԻԿ ՆԿԱՐՆԵՐ




**Նկար 1:** Չորրորդականի (Q) և նեղօքենի (N) նստվածքների ֆացիալ պրոֆիլ

1. կավավազներ, 2. խոշորաբեկոր (ալյուվիալ, դելյուվիալ) առաջացումներ, 3. դելյուվիալ առաջացումներ, 4. թթու լավաներ, 5. տուֆակոնգլոմերատներ, 6. տուֆեր




**Նկար 2:** Օրինակ՝ բացատրող շերտագրական և տեկտոնական աններդաշնակությունների միջև տարբերությունը



ա. սխեմատիկ քարտեզ, բ. և գ. կտրվածքների տարբերակներ Ա-Բ գծով




**Նկար 3:** Շերտագրական անկյունային (ոչ ազիմուտայի) աններդաշնակություն պլանում (ա) և կտրվածքում (բ)




**Նկար 4:** Աններդաշնակության մակերեսի կառուցվածքը  
ա. աններդաշնակության մակերեսների պատում վերը տեղադրված  
ապարներով, բ. աններդաշնակության հարում, գ. զուգահեռ հարում




**Նկար 5:** Շերտագրական անկյունային աններդաշնակությունների պատկերումը երկրաբանական քարտեզի և կտրվածքի վրա



**Նկար 6:** Զուգահեռ շերտագրական աններդաշնակություն  
ա. պլանում (քարտեզի վրա), բ. երկրաբանական կտրվածքում,  
գ. շերտագրական սյունակում




**Նկար 7:** Ֆլեքսուրաների ձևերը  
ա. ներդաշնակ, բ. աններդաշնակ, գ. կառուցվածքային դարավանդ




**Նկար 8:** Ծալքերի ձևերն ըստ առանցքային մակերեսի դիրքի

1. ուղիղ (սխմետրիկ) ծալքեր,  $\alpha_1 = \alpha_2 = \alpha_3 = \alpha_4$ , 2 – 5. ասխմետրիկ ծալքեր,  
 $\alpha_1 \neq \alpha_2 \neq \alpha_3 \neq \alpha_4$ . 2. թեք, 3. շրջված, 4. պառկած, 5. խորասուզվող,
- աբ, աբ', աբ'' կտրվածքներում ծալքերի առանցքային մակերեսները




**Նկար 9:** Ծալքի ձևը պլանում կրկնում է նրա ձևը կտրվածքում  
(ըստ Ω. Բերտինգի)


Պլան (հատակագիծ)



**Նկար 10:** Ծալքավոր կառուցվածքներով տարրած կտրվածքներ, որոնք կազմված են հաշվի առնելով առանցքային գծերի դիրքը (ԱԲ, Գ-Դ, ԵԶ, ԷՀ) և առանց հաշվի առնելու առանցքային գծերի դիրքը (Գ-Դ', Գ"-Դ')



**Նկար 11:** Ծալքավոր կառուցվածքով կտրվածքի ( $P$ ) կառուցումն ըստ  
ապարների տեղադրման էլեմենտների (ա)





**Նկար 12:** Ծալքերի ստորաբաժնումը պլանում ըստ երկարության (ա) և  
լայնության (բ) փոխհարաբերության  
ա. գծային, բ. բրախի, գ. զմբեքաձև (անտիկլինալ) և ափսեաձև  
(սինկլինալ) ծալքեր (մուլդաներ)

**ԾԵՐՏԵՐԻ ԻՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆԿՄԱՆ  
ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՆՈՍՈԳՐԱՄՆԵՐ**



**Նկար 13:** Ծերտերի անկման անկյունների որոշման նոմոգրամա. նրանց տարածմանը ոչ ուղղահայաց ուղղություններով: Արցիսների առանցքի վրա նշված են շերտերի տարածման գծի և տրված ուղղության միջև անկյունը, իսկ օրդինատների առանցքին՝ շերտերի անկման փնտրվող անկյունները: Մուգ կոր գծերը համապատասխանում են շերտերի անկման անկյուններին: Մինչ այս տրված է նոմոգրամից օգտվելու կարգը:

**Նկար 14:** Ծերտերի անկման անկյունների շեղումների որոշման նոմոգրամ. հորիզոնական մասշտարի նկատմամբ կտրվածքի ուղղաձիգ մասշտարի մեծացման դեպքում: Արցիսների առանցքի վրա նշված է ուղղաձիգ մասշտարի մեծացման աստիճանը, իսկ օրդինատների առանցքին՝ անկյունների փնտրվող շեղումները: Մուգ կոր գծերը համապատասխանում են շերտերի անկման իրական անկյուններին: Մինչ այս տրված է նոմոգրամից օգտվելու կարգը:



**Նկար 15:** Ծերտերի իրական հզորությունների որոշման նոմոգրամ՝ ըստ չափված ուղղաձիգ հզորության: Աղեղնաձև սանդղակի վրա նշված են շերտերի անկման անկյունների մեծությունները, արցիսների առանցքին՝ ուղղաձիգ հզորությունները, օրդինատների առանցքին՝ փնտրվող իրական հզորությունները: Նոմոգրամից օգտվելու կարգը տրված է սխեմայում:



Նկար 13



Նկար 14



Աղյառ 15

Աղյուսակ 10.1. Շերտերի անկման իրական անկյան ( $\alpha$ , աստիճան) և շեղ կտրվածքում բ անկյան միջև  
կախվածությունը (մինչև  $0.5^0$  ճշտությամբ)

$\alpha$	Անկման ուղղության և կտրվածքի գծի միջև կազմած անկյունը, աստիճան															
	10	15	20	25	30	35	40	45	50	55	60	65	70	75	80	85
10	10.0	9.5	9.5	9.0	8.5	8.0	7.5	7.0	6.5	5.5	5.0	4.3	3.5	2.5	1.5	1.0
15	15.0	14.5	14.0	13.5	13.5	12.5	11.5	10.0	10.0	8.5	7.5	6.3	5.0	3.5	2.5	1.5
20	19.5	19.5	19.0	18.0	17.5	16.5	15.5	14.5	13.0	11.5	10.5	8.5	7.0	5.5	3.5	2.0
25	24.5	24.0	23.5	23.0	22.0	21.0	19.5	15.0	16.5	15.0	13.0	11.0	9.0	7.0	4.5	2.5
30	29.5	29.0	28.5	27.5	26.5	25.5	24.0	22.0	20.5	18.5	16.0	13.5	11.0	8.5	5.5	3.0
35	34.5	34.0	33.5	32.5	31.0	30.0	28.0	26.5	24.0	22.0	20.5	16.5	13.5	10.0	7.0	3.5
40	39.5	39.0	38.0	37.0	36.0	34.5	32.5	30.5	28.5	25.5	22.5	19.5	16.0	12.0	8.5	4.0
45	44.5	44.0	43.0	42.0	41.0	39.5	37.5	35.5	32.5	29.0	26.5	23.0	19.0	14.5	10.0	5.0
50	49.5	49.0	48.0	47.9	46.0	44.5	42.5	40.0	37.5	34.5	30.5	26.5	22.0	17.0	11.0	6.0
55	54.5	54.0	53.5	52.5	51.0	49.5	47.5	45.5	42.5	39.5	35.5	31.0	26.0	20.5	14.0	7.0
60	59.5	59.0	58.5	57.5	56.5	55.0	53.0	51.0	48.0	45.0	41.0	36.0	30.5	24.0	16.5	8.5
65	64.5	64.0	63.5	62.5	61.5	60.5	58.5	56.5	54.0	51.0	47.0	42.0	36.0	29.0	20.5	10.5
70	68.5	69.5	69.0	68.0	67.0	66.0	64.5	63.0	60.5	57.5	54.0	49.5	43.0	35.5	25.5	13.5
75	-	74.5	74.0	73.5	73.0	72.0	70.5	69.0	67.5	65.0	62.0	57.5	52.0	44.0	33.0	18.0
80	-	79.5	79.5	79.0	78.5	78.0	77.0	76.0	74.5	73.0	70.5	67.5	62.5	55.5	44.5	26.5
85	-	-	84.5	84.5	84.0	84.0	83.5	83.0	82.0	81.5	80.0	78.5	75.5	71.5	63.9	45.0

**Օրինակ.** Շերտի անկման իրական անկյունը ( $\alpha$ ) հավասար է  $15^0$ , շերտի անկման ուղղության և կտրվածքի գծի միջև անկյունը կազմում է  $30^0$ : Անիրամեշտ է որոշել շերտի անկման անկյունը կտրվածքի վրա: Աղյուսակում ձափից՝ ողղաձիգ սյունակում գտնում ենք  $15^0$  անկյունը և այնուհետև շարունակելով հորիզոնական ուղղությամբ շարժվում ենք առաջ, մինչև  $30^0$ -ին համապատասխանող ուղղաձիգ սանդրակին հանդիպելը: Հատման կետում գտնում ենք շերտի անկման անկյունը շեղ կտրվածքում ( $\beta$ ), որը կազմում է  $13.5^0$ :

Աղյուսակ 10.2. Կտրվածքի մեծացված ուղղաձիգ մասշտարում անկման ակյան շեղումը  
(Ըստ Ե.Վ. Սիլանովսկիի, պարզեցված է մինչև  $0.5^0$ )

ՄՀՄ*	Անկման իրական անկյունները, աստիճան																
	5	10	15	20	25	30	35	40	45	50	55	60	65	70	75	80	89
x2	10	19	28	37	43	50	54.5	59	63.9	67	71	74	77	80	82.5	85	87.5
x3	15	30	39	47.5	54.5	60	65	68.5	72	74.5	77	79	81	83	85	87	88
x4	19	35	47	55.5	62	66.5	70	72.5	76	78	80	82	83	85	86	87.5	89
x5	23	41.5	53	61	67	71	74	77	79	81	82	83	85.5	86	87	88	89

\* ՄՀՄ – Ուղղաձիգ մասշտարի հարաբերական մեծացումը

## ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### Հիմնական

1. Խարազյան Է.Խ., Երկրաբանահանութային աշխատանքների մեթոդներ (մեթոդական ձեռնարկ): Եր.: ԵՊՀ հրատ., 2006, 100 էջ:
2. Սարգսյան Հ.Հ., Հնաշխարհագրական ուսումնասիրությունների մեթոդները (ուսումնական ձեռնարկ): Եր.: ԵՊՀ հրատ., 2010, 104 էջ:
3. Սարգսյան Հ.Հ., Գրիգորյան Ա.Գ. Ըերտագրական ուսումնասիրությունների մեթոդները (ուսումնական ձեռնարկ): Եր.: ԵՊՀ հրատ., 2013, 116 էջ:
4. Սարգսյան Հ.Հ., Սարգսյան Ռ.Ս., Երկրաբանական տերմինների եռալեզու հանրագիտական բառարան (ռուսերեն - հայերեն - անգլերեն): Եր.: Երևանի համալս. հրատ., 2007, 672 էջ:
5. Ատլաս սովորական գեղագիտական գործառնությունների տերմինների համար (ռուսերեն - հայերեն - անգլերեն): Եր.: Երևանի համալս. հրատ., 2007, 672 էջ:
6. Ատլաս սովորական գեղագիտական գործառնությունների տերմինների համար (ռուսերեն - հայերեն - անգլերեն): Եր.: Երևանի համալս. հրատ., 2007, 672 էջ:
7. Բելոսով В.В., Структурная геология: Учеб. пособие. 3-е изд. М.: Изд. МГУ, 1986, 248 с.
8. Инструкция по организации и производству геологосъемочных работ и составлению Государственной геологической карты СССР масштаба 1:50000 (1:25000). Ленинград: ВСЕГЕИ, 1986, 243 с.
9. Кныш С.К., Гумерова Н.В., Полиенко А.К., Основы структурной, исторической и региональной геологии: Часть 1. Структурная геология: учебное пособие. Томск: Изд. ТПУ, 2008, 116 с.
10. Куликов В.Н., Михайлов А.Е., Руководство к практическим занятиям по структурной геологии и геокартированию. М.: Недра, 1993, 144 с.
11. Куликов В.Н., Михайлов А.Е., Структурная геология и геокартирование. М.: Недра, 1991, 286 с.
12. Михайлов А.Е., Структурная геология и геологическое картирование. Учебное пособие. 4-е изд. М.: Недра, 1984, 464 с.
13. Номоконов В.Е., Полиенко А.К., Кныш С.К., Чтение и построение геологических карт и разрезов (лабораторный практикум). Томск: Изд. ТПУ, 1994 – 60 с.; 2002 – 58 с.
14. Пожиленко В.И., Геологическое картирование с основами структурной геологии. Учебное пособие. Мурманск: 2008, 243 с.

15. Хайн В.Е., Ломизе М.Г., Геотектоника с основами геодинамики: Учебник. М.: КДУ, 2-е изд., испр. и доп., 2005, 560 с., [16] с. цв. ил.: ил.

### *Лриցიგჲ*

1. Атлас схематических геологических и бланковых карт. Под ред. М.М. Москвина. М.: Изд. МГУ, 1976, 46 с.
2. Атлас учебных геологических карт. Под ред. А.А. Богданова, М.М. Москвина. М.: Госгеолтехиздат, 1955.
3. Белоусов В.В., Основы структурной геологии. М.: Недра, 1985, 205 с.
4. Благовидов В.В., Жимулов Ф.И., Геологические карты и графический анализ структурных форм. Новосибирск: НГУ, 2008, 70 с.
5. Кныш С.К., Структурная геология. Томск: Изд. ТПУ, 2008, 242 с.
6. Корсаков А.К., Структурная геология. М.: Изд. КДУ, 2009, 328 с.
7. Методические указания по составлению курсовых работ по “Структурной геологии и геологическому картированию”. Сост. Михайлов А.Е. с дополнениями С.К. Арзуманяна. Ереван: Изд. ЕГУ, 1987.
8. Михайлов А.Е. и др., Лабораторные работы по структурной геологии, геокартированию и дистанционным методам. М.: Недра, 1988, 196 с.
9. Павлинов В.Н., Соколовский А.К., Структурная геология и геологическое картирование с основами тектоники. М.: Недра, 1990, 318 с.
10. Первушов Е.М., Ермохина Л.И., Структурная геология и геологическое картирование: Учеб.-метод. пособие для студ. геол. фак.: В 2 ч., Ч. 1. Геометрия и пространственное положение геологических тел. Саратов: Изд. Сарат. ун-та, 2008, 138 с.
11. Первушов Е.М., Ермохина Л.И., Структурная геология и геологическое картирование: Учеб.-метод. пособие для студ. геол. фак.: В 2 ч., Ч. 2. Анализ геологических карт среднего масштаба. Саратов: Изд. Сарат. ун-та, 2008, 68 с.
12. Смирнов В.И., Геология полезных ископаемых. М.: Недра, 4-ое изд., 1982, 669 с.
13. Старостин В.И., Игнатов П.А., Геология полезных ископаемых. Учебник для высшей школы. М.: Академический проспект, 2004, 512 с.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
1. ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ	
ԽՆԴԻԲՆԵՐՆ ՈՒ ՍԵԹՈՂՆՆԵՐԸ	5
1.1. Քարտեզի վրա երկրաբանական սահմանների վերլուծում	6
1.2. Շերտավորության հաջորդականության վերլուծում	8
1.3. Ընդմիջումների և աններդաշնակությունների վերլուծում	9
1.4. Ֆորմացիաների վերլուծում	10
1.5. Հրային ապարների հասավի որոշման մեթոդները	16
1.6. Աետամորֆային ապարների քարտեզների վերլուծություն	18
2. ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՓՈԽԵՐԸ	20
3. ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՔՈՏԱՅՅԻՆ ՄԱՍՆ	26
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Տիտղոսաբերքի օրինակելի ձև	37
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Երկրաբանական կտրվածքների կառուցում	38
1. Շերտերի հորիզոնական տեղադրման պայմաններում	38
2. Շերտերի թեք տեղադրման պայմաններում	39
3. Ծալքավոր կառուցվածքի պայմաններում	40
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Տեկստոնական քարտեզի պայմանական նշաններ	43
ՀԱՎԵԼՎԱԾ 4. Հրային ապարների պայմանական նշաններ	44
ՀԱՎԵԼՎԱԾ 5. Ապարների պայմանական նշաններ (քծանշաններ)	46
ՀԱՎԵԼՎԱԾ 6. Կառուցվածքային տարրերի նշաններ	48
ՀԱՎԵԼՎԱԾ 7. Օգտակար հանածոների կուտակումների պայմանական նշաններ	50
ՀԱՎԵԼՎԱԾ 8. Միներալների և նրանց ագրեգատների տառային նշաններ	52
ՀԱՎԵԼՎԱԾ 9. Մխեմատիկ նկարներ	53
ՀԱՎԵԼՎԱԾ 10. Շերտերի իրական հզրությունների և անկման անկյունների որոշման նոմոգրամներ և աղյուսակներ	60
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	66



**ԱՇՈՏ ՍՈՒՐԵՆԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՇԽԱՆԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

**«Կառուցվածքային երկրաբանություն և երկրաբանական  
քարտեզագրություն» դասընթացի կուրսային աշխատանքների  
մեթոդական ցուցումներ**

**Գիտ. խմբագիրներ՝ Երկրաբ.-հանքար. գ.թ., դոցենտ Ռ.Ս. Մովսեսյան  
Երկրաբ.-հանքար. գ.թ., դոցենտ Հ.Պ. Գույումջյան  
Գրախոս՝ տեխնիկ. գ.դ., պրոֆեսոր Վ.Պ. Վարդանյան**

**Համակարգչայի շարվածքը՝ Հ.Բ. Մովսեսյանի և Գ.Ռ. Գարեյանի  
Համակարգչային ձևավորող՝ Կ. Զալարյան  
Հրատ. խմբագիր՝ Լ. Հովհաննիսյան**

Չափս՝ 60x84 1/16: Տպ. մամուլ 4,5:

Տպաքանակ՝ 100:

---

**ԵՊՀ հրատարակչություն**

**ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1**



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՆԱショՆԱԼ ԳԱՎԱՅՐԻ

ԵՐԵՎԱՆ 2014